Թ. ՏԱՐԻ 2595 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 9 ՀՈՌԻ 4385 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1892 9 ԲԼՊԻԼ ԷՎՎԷԼ 1310 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ,
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌وك غزه‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳՐԻՐ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արժէք	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան Ֆրանք	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր. Տարեկան Օսմ. Ոսկի	2
Դաւառաց թղթատարի ծախքը միօրինակ Ղրուշ	50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 18/30 ՍԵՊՏ. 1892

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԻԶՄԻՐԻ ՀԱՅՈՑ

Իզմիրի մէջ ազգային երկսեռ վարժարանաց վերաբացման առթիւ, տեղւոյն պատուելի Ռուսական Խորհուրդը տպակալ շրջաբերական մը հանած է, որով ծնողքներէն կը խնդրէ հոգ տանիլ իրենց զաւակաց կանոնաւորապէս դպրոց յաճախելուն։ Թոյլ կը յայտնէ որ երկսեռ վարժարանաց վիճակը պատրուակելով իրենց զաւակներն օտար վարժարաններ ղրկող ծընողք, տեսնելով սոյն ազգային հաստատութեան բարեկարգ ընթացքը, պիտի հաճին նորէն ազգային վարժարանը ղրկել զանոնք։ Զրիաբար կամ աննչան վճարման մը փոխարէն հայ ծնողք ազգային յարկի մը տակ պիտի գտնեն ազգային կրթութիւն, որ օսմաններէնի ուսման հետ կարեւորագոյն և յարմարագոյն է հայ մանկտւոյն համար։ Բաց ասոնք, Ֆրանսերէնի և անգլիերէնի ուսումներն զգալի բարեփոխում կրած են, և յաւելուածական դասարան մը բացուած է, ուր շրջանաւարտ տարի մ'ետ պիտի շարունակեն ոչ միայն այս լեզուաց, այլ և մի քանի գիտութեանց և մայրենի ու օսմաներէն լեզուներու ուսմունքը։

Մեր Իզմիրցի բարեկամներէն մին, տեղւոյն Ռուսական Խորհրդոյն այս շրջաբերականէն թելադրեալ, հետեւեալ խորհրդածութիւնները կը հաղորդէ մեզ, զորս արժան կը համարինք հիւրընկալել մեր սիւնակաց մէջ, քանի որ հասարակութեան մ'ընկերային վիճակին վրայ խօսած ժամանակ, կարեւոր է անոր կրթական վիճակին վրայ ետ դաղափար մը տալ։

«Օտար վարժարաններ յաճախելու սովորութիւնը նոր չէ։ քառորդ դարէ ի վեր անոր վրայ կը խօսուի, բայց թէ ինչ միջոցներ ձեռք առնուլ պէտք թէ ինչ միջոցներ ձեռք առնուլ պէտք է, ոչ ոք կը խորհի։ Երբեմնակի ճիգեր կը լինին կամ փափաք կը յայտնուի մեր վարժարանները բարեկարգելու՝ կարծելով անշուշտ թէ օտար վարժարանաց հայ ծնողաց համար ունեցած հրապոյրն իրենց յառաջադէմ ընթացքն է։

«Վարժարաններ բարեկարգելու ճիգ կամ եռանդ ինչ շարժառիթով ալ լինին՝ միշտ գովելի են։ Դժբաղդաբար սոյն պարագայի մէջ չէ ճշմարիտ և ուղիղ միջոց առաջադրեալ նպատակին հասնելու, այսինքն օտար վարժարաններ դիմող հայ աշակերտաց երամը ազգ. վարժարան վերադարձնելու։ զի անոնց ծնողք, ինչպէս յաճախ խօսուած է, ոչ թէ հայ և օտար վարժարաններու համեմատութիւնն ընելով և մէկուն միւսի վրայ ունեցած առաւելութիւնը ստուգելով, այս կամ այն վարժարանը ընտրած են իրենց որդւոց համար, այլ ներքուի մեղ ըսել՝ գրէթ խառնարար հետեւելով կանացի կարծեաց, որոնք տարաբախտաբար յաճախ ոչ լուրջ են և ոչ ալ ծանրախոհ։

«Գոլէժիոյ» մը մէջ, ինչպէս կ'ըսեն, աղջիկ կամ տղայ զաւակ մը ունենալ, տարւոյն ընթացքին մէջ իւր հացէին Monsieur կամ Madame տիտղոսով նամակներ և հաշուեցոյցներ ընդունիլ և զանոնք վէսօրէն բանալ, տարեկան հարցաքննութեանց միջոցին քանի մը անգամ հագուիլ, սգուիլ, և դպրոց երթալով քննութեանց ներկայ գտնուիլ և օտարաց կրթասէր երեւիլ և օտարի մը բերնէն քանի մը անգամ լսել մատա՜մ, մատա՜մ բառն որ իրենց կ'ուղղուի, մեր մայրերէն չատերուն իտէալն է։

«Թէև կ'անգիտեն խեղճերը զի եթէ անգամ մը հոն բերան բանան և երկու խօսք հաստ առդանութեամբ յանարէն խօսին, ի՜նչ ծաղր ու ծանակ կ'ըլլան և իրենց շուրջ-բրքիջ կը շարժեն։

«Փոյթ չէ թէ իրենց զաւակ մայրենի լեզու չուսնի և մայրենի կրթութենէ ինչպէս նաև քիչ ու շատ հիմնական ուսումնականութենէ ալ զուրկ մնայ, բաւական է որ թուրքի պէս օտար լեզու մի քանի բառ արտասանէ, առանց յաճախ անոնց նշանակութիւնն իսկ ստուգապէս ըմբռնած ըլլալու։

«Արդէն քառորդ դարէ և աւելի ժամանակէ ի վեր օտար վարժարաններէ դուրս եկող հայ աշակերտներ աւելի բարձր կարողութիւն մը ցոյց չեն տար։ վէպեր կարդալ և վիպական ուռուցիկ գաղափարներով ու անուշներով անանիլ ոչ լեզուագիտութիւն ոչ ալ ճշմարիտ ուսումնականութիւն կ'ենթադրէ։

«Բայց և այնպէս տակաւին հայ աշակերաք կը յաճախեն ու կը յաճախեն օտար վարժարաններ. և զարմանալին այն է որ չարը փոխանակ օր ըստ օրէ նուազելու, կը կրկնապատկի։

«Ժամանակ մը բարձր թոշակներով գոլէժներ կային, որոնք մի միայն հարուստի զաւակներուն հպելի էին։ մի քանի տարիէ ի վեր բացուած է Հայոց Թաղի մէկ ծայրը բողոքականաց դպրոց մը, ուր չափաւոր թոշակով մը մինչև դասու և արհեստաւորաց զաւակներ իսկ մուտ կը գտնեն։ Եւ գիտէք ինչու կ'երթան հոն, անդղիերէն ուսանելու համար, իբր թէ անվրէպ պէտք ունին անդղիերէնի։ Նորութիւնն անդղիերէնն է, և ինչ անդղիերէն։ հազիւ երկտող բան մը դրել և երկու խօսք արտասանել, և ահա ամեն ինչ վերջացաւ։ տաճկերէն թոյլ, ֆրանսերէն՝ թոյլ, հայերէն՝ թոյլ։ զի դպրոցը վարող պատուելիներն իսկ չեն գիտեր, ինչպէս ցոյց կուտայ՝ դպրոցի վերաբացման առթիւ իրենց հրատարակած յայտարարութիւնն, որ բնաւ հայերէն չէ։ Անշուշտ աւելի չկրնար սպասուիլ այնպիսի դպրոցէ մը որ որոշ ծրագիր և ընթացք չունի, այլ ամեն ինչ կախում ունի աշակերտաց աւելի կամ նուազ թիւէն։ Խեղճերը այս ինչ չենքը դնեցինք ըսելով մարդ համոզել կ'ուզեն, բայց մի և նոյն միջոցին չեն ծածկեր թէ դպրոցի ներքին յառաջդիմութեան համար այն ատեն բան մը պիտի ընեն երբ բաւական թուով աշակերտ ընդունին։

«Այլ հայ ծնողք այս ամենը հասկնալէ չատ հեռու են, կարծես նոր գտնուած տունը իրենց պիտի ընորհուի, ուստի կը վազեն ինչպէս ոչխարի երամ մը իրարու ետեւ ցատկելով տեղ մը կ'անցնի։

«Մինչեւ իսկ ազգային պաշտօնեայներ և քահանայ այս խոտոր ընթացքին կը հետեւին, առանց մտածելու թէ ազգին դրամով կ'ապրին, բայց օտարին համար զաւակ կը պատրաստեն, քանի որ իրենց զաւակ՝ զուրկ մայրենի կրթութենէն՝ անուամբ միայն հայ եկեղեցւոյ զաւակ կրնայ մնալ և աւելի ոչինչ։

«Պատուելիները կը խրախուսուին և խրախուսուելու ալ շատ իրաւունք ունին. զի Բարբերդէն, Սիւնթապէն և այս կարգի տեղերէ գալ Իզմիրի պէս տեղ մը իբր լուսաւորիչ ընդունուիլ պրոտիկ փառք չէ, և մինչեւ իսկ տունէ տուն կը շրջին և գիտեմ տուն մը, առաջնորդարանի պաշտօնեայի տուն մը, ուր բողոքական դպրոցի տեսուչը դացած և տանտիրոջ երկու զաւակները առլիւը ձգելով դպրոց տարած է նոր տարեշրջանի առթիւ։

«Ի՞նչ այսքան եռանդ և փոյթ այն բողոքական պարոններու կողմէ, միթէ կ'երկնչին որ հայ մանկտին անուս կը մնայ, թէ իրենց նպատակին համար, և ինչպէս Ռուսական Խորհուրդը ըսած է, կրօնական-շահախնդրականնպատակ։

«Սակայն իրաց այս վիճակին առջեւ մեր Ռուսական Խորհուրդն անտարբեր չի գտնուիր, և ինչպէս իւր նախորդը նոյնպէս և արդի Խորհուրդն, որ նոյնին կրկնութիւնն է գրէթէ իւր կազմութեամբ, չէ թէ միայն դժգոհելով, տրտնջելով կը բաւականանայ, ինչպէս ցոյս վայր, այլ և կը գործէ։ Ոչ միայն կ'աշխատի և կը յաջողի ազգ. երկսեռ վարժարանները բարեփոխել և արդէն իսկ զգալի արդիւնքներ յառաջ բերել, այլ և թէ Առաջնորդ Մ. Հր և քահանայից միջոցաւ և թէ անձամբ կ'աշխատի հասուցել ծնողները թէ ինչ վնասակար ընթացքի կը հետեւին, թէ ինչ առաւելութիւններ ունին հայ վարժարաններ օտար վարժարաններէն և թէ ինչ յարմարութիւններ ունի երկրին և եկեղեցւոյ հոն արուած կրթութիւնն և ըստ կարի յաջողած է ու կը յաջողի։ Մաղթենք որ ուրիշներ ևս ձեռնտու դանուին Ռուսական Խորհրդոյ նուիրական աշխատութեան մէջ, որ օրուան չարիքին առջեւ առնելու վսեմ նպատակն ունի։

«Անշուշտ ասով չի կրնար այս անդամ ևս խորհ մը դրուիլ Պոլսեցի եւ Զմիւռնիացի Հայոց մէջ։ Չի այս երեւոյթ պէտք չէ մանաւորապէս Իզմիրի Հայոց մէջ տեսնել։ Պոլսեցի Հայն ալ աւելի կամ նուազ դերծ չէ այս ունայնութենէն, և ո՛չ միայն Հայն, այլ և նուազագոյն ասոիճանաւ մը Յոյնն եւ միւս հասարակութիւններ։ Մինչեւ իսկ Բիւս, որ զուտ յունական քաղաք մ'է և ունի ոչ միայն նախակրթարան այլ և միջնակարգ վարժարան, կը գանգատի թէ մաս մը յոյն աշակերաք տեղւոյն Լատինաց դպրոցը կը յաճախեն։

«Սակայն այս պարագաներ եթէ մասամբ կրնան մեր ցաւը մեղմել, միւս կողմէ պէտք չէ որ գմեղ անտարբերութեան մատնեն, այլ ինչպէս ընդհանուր վտանգի մը առջեւ ամեն ոք ինքնապահպանութեան կը դիմէ, այս խնդրոյ մէջ ևս մենք զմեզ պահպանելու աշխատինք, թէ մէկ կողմէ ամբոխի սխալը ցոյց տալով և թէ միւս կողմէ մեր վարժարանները բարելաւելով։»

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԴՈՐԾԵՐ. —Սերպիոյ խնամակալ Պ. Ռիսթիչ Պ. Բաշիչի արմատական նախարարութեան հրաժարման նկատմամբ ըսաւ ռուս թերթի մը ներկայացուցչին թէ Պ. Բաշիչ և արմատական վարչութիւնն այլ ևս սերպ ժողովրդեան վստահութիւնը չէին վայելեր և այս բանիս հրաժարեալ նախարարապետն ինք համոզուած էր արդէն։ Պ. Բաշիչ Սքուբշինայի արտասովոր նիստ մը կ'ուզէր գումարել, երեք խնամակալներէն հանգուցեալին տեղ իրեն նպաստաւոր խնամակալ մ'ընտրել տալու նպատակաւ։ Պ. Ռիսթիչ կ'ըսէ թէ այս ընտրութեան ինք ըսելիք չունէր, բայց ընտրեցեալ ցուցակը կ'ուզէին տեսնել ինք և իւր պաշտօնակից միւս խնամակալն, և Պ. Բաշիչ չուզելով այնպիսի ցուցակ մը ներկայացնել, պատրուակ մ'ընելու հրաժարեցաւ։ Պ. Ռիսթիչի նպատակն էր թող չալ որ ծայրայեղ արմատական մը խնամակալ ընտրուէր։ «Մեր արտաքին քաղաքականութիւն ինչպէս էր ցոյս վայր, նոյն կը մնայ, և Ռուսիա դժգոհելու պատճառ մը չունի։ Այս մասին նորակազմ ազգական վարչութիւն իւր նախորդին չափ վստահելի է։ Սերպիոյ ազգական կուսակցութիւնը միշտ Ռուսիոյ համակիր եղած է։ Ինչո՞ւ համար ուրեմն ռուս մամուլը դժգոհութիւն կը յայտնէ նոր վարչութեան կազմուելուն առթիւ։— Հրաժարեալ վարչապետ Պ. Փաշիչ ալ ըսաւ Նայէ Ֆրայէ Բրէսէի թղթակցին թէ արմատական ազգական պիտի գործեն առաջիկայ երեսփոխանական ընտրութեանց մէջ, և յաղթութիւնն իրենց պիտի մնայ։ Արմատականք ամենայն ինչ հանդարտօրէն պիտի կատարեն։ Խնամակալութիւնն օրինաց համաձայն պիտի վարուի, և Պ. Ռիսթիչ ինք հրաժարեալ արմատական վարչութեան ըսած է թէ «Ընտրող ժողովրդեան կոչումը բրի։ եթէ ի նպաստ ձեզ որոշում տրուի ընտրութեանց մէջ, կրնաք վերադառնալ յիշխանութիւն։»

Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ լրագրութիւնը մեծապէս կը զբաղի յունական վարժարանաց խնդրով, որպ վրայ խօսեցան վերջին օրերս առնուած հեռագիրք։ Լ. Հէրբլա Քրէսբնտանս Բոլիթիքէ կ'առնու հատուած մը, ծանուցանող թէ Աթէնքի լրագիրք անդամ հրատարակութիւններ կ'ընեն Փիլիպէի արուեստանոցին վրայ, զոր իբրև անյաջող գործ մը կը ներկայացնեն, որովհետեւ Յոյնք վշտացած են յունական վարժարանաց նկատմամբ ձեռք առնուած միջոցներէն։ Կը յիշուի թէ Սոպրանէն անցեալ տարի դպրոցական օրէնք մը քուէարկեց, որով կը յայտարարէ թէ իշխանապետութեան ամեն վարժարանաց մէջ ամեն ուսմունք պուլկար լեզուաւ պէտք է աւանդուին, որով Արեւելեան Ռումելիի Յունաց դպրոցի և եկեղեցւոյ մասին առանձնաշնորհեալ դիրքը ջնջուեցաւ։ (Եթէ այս է ճշմարտութիւնն, յոյն վարժարանաց մէջ յունարէնի դասախօսութիւնը ջնջուած չի կրնար ըլլալ, այլ միայն դասաւանդութեան լեզուն պուլկարերէն որոշուած կ'ըլլայ, ինչպէս Ռուսիոյ վարժարանաց մէջ, թէպէտ ամեն առարկայք ռուսերէն կ'աւանդուին, բայց լեհերէն ալ կ'աւանդուի լեհական վարժարանաց մէջ, վրացերէն՝ վրացի աշակերտ ունեցող վարժարանաց մէջ, ևն։ Միւս կողմէ, կը հաստատեն թէ միայն նախակրթարանաց մէջ ոչ-պուլկարերէն լեզու դաս չպիտի տրուի։)

—Սոպլանդիոյ հաստատած օրէնքը Սեպտեմբեր 1 ին սկսաւ գործադրուիլ կրթական նախարար Պ. Զիվքովի շրջաբերականը, որ կ'ըսէ որոշապէս թէ յոյն տղայք դասաւանդութեան լեզուին պուլկարերէն լինելէն օգուտ միայն կրնան քաղել պուլկարական և պուլկարախօս երկրի մը մէջ։ Յոյն լրագիրք կը խնդրեն որ կառավարութիւնն անգամ մ'ևս միջնորդ ի կարգադրութիւն խնդրոյն։

—Փիլիպէէ կը ծանուցուի նաև թէ պուլկար իշխանութիւնք ցուցակագրել կուտան ամեն հաստատութիւններն, կալուածներն և այլն, որք ցարդ կը ծառայէին Պուլկարիոյ յունական վարժարանց պահպանման։ Կը թուի թէ պուլկար կառավարութեան նպատակն է գրաւել այս յունական կալուածներ, և կրթական նախարարութեան եկեղեցոյցէն թոշակ կապել յունական վարժարանց դասատուներուն, զորս ինք պիտի անուանէ և ղրկէ։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ. — Ֆրանսական լրագիրք ոմանք յոյս յայտներ էին թէ Իտալացիք, Ճենովայի հանդէսներէն ետքը, մեծապէս պիտի փոփոխեն իրենց քաղաքականութիւն, և Ֆրանսայի նպաստաւոր ընթացք մը բռնելով, քիչ քիչ պիտի հեռանան Երրեակ Նիզակակցութենէն։ Իտալիոյ նախարարապետ Պ. Ճոլիդտիի լրագիրը Կազէդտա Բիէմոնդէզէ կը յիշեցնէ թէ Իտալիոյ արտաքին գործոց արդի նախարար Պրին ծովակալն էր որ 1891 յունիս 17|29 ի յիշատակելի նստին մէջ իտալացի երեսփոխաններուն առաջարկեց հանդիսաւոր հաւանութիւն յայտնել Երրեակ Նիզակցութեան նորոգման և ստուար մեծամասնութիւնը բուռն ծափահարութեամբ հաւանեցաւ։ Եւ ծովակալ Պրին միտքը չէ փոխած յօրէ անտի։

Պ. ԿԼԱՏՍԹՈՆ Նորթհ Ամերիքքն Ռըվիու ամերիկեան գլխաւոր հանդէսին այն թուոյն մէջ որ ամսոյս 12 24ին լոյս տեսաւ՝ կը հրատարակէ երկար յօդուած մը, որով կ'արդարացնէ իւր իւրանական քաղաքականութիւնը, պատմական և այլ տեսութեամբք ապացուցանելով իւրանական ուրոյն Խորհրդարանի մը հաստատման պէտքն, ինչպէս ինք պիտի առաջարկէ Երեսփ. Ժողովոյ առաջիկայ նստաշրջանին մէջ։ Բայց մինչեւ այն ատեն, Պ. Կլատսթոն կը զգուշանայ իւր ծրագրին մանրամասնութեանց մէջ մտնելէ։

Պ. ԼԱՊՈՒՇԷՌ չի ներեր Պ. Կլատսթոնի՝ նորակազմ վարչութենէն իւր դուրս թողուիլը, բայց այս բանն իւր բերանը չառնլով, զանազան խնդրոց մէջ կ'արտայայտէ իւր գժգոհութիւն։ Պ. Կլատսթոն յայտարարած ըլլալով թէ Տըպլինի Խորհրդարանին կազմութենէն ետքն ալ 30ի չափ Իւրանտացի երեսփոխանաց թող տալու է գալ բազմիլ Լոնտոնի Խորհրդարանին մէջ, Պ. Լապուշէր կը յայտարարէ իւր Թրութհ շաբաթաթերթով թէ Իւրանտացւոց այս կրկնակ իշխանութեան տրուելուն անպիտանի ընտրողք երբեք չպիտի հաճին։ Քանի որ Իւրանտացիք իրենց գործերն իրենց գլուցած կերպիւ կրնան տնօրինել, այլ ևս մանակցելու չեն Լոնտոնի Խորհրդարանին աշխատութեանց։ Նոյն իսկ Բառնել չէր պահանջեր որ Իւրանտացիք ի Տըպլին Խորհրդարան մ'ունենալէ ետեւ, դան Լոնտոն՝ Անգլիոյ և Սկովտիոյ գործոց վրայ որոշումներ տալու։

—Ցանուն արմատականաց, Թրութհ չի հաւանիր նաև Լորտ Ռոսպէրիի արտաքին աշխարհավարութեան, և կը յայտարարէ որ եթէ Լորտ Ռոզպէրի իւր նախորդաց ընթացքը շարունակէն զատ ուրիշ բան չի կրնար ընել, և եթէ Պ. Կլատսթոն չի կրնար իւր արտաքին գործոց նախարարին ուղղութեան վրայ իբրեւ նախարարապետ հսկել, գոնէ երմտական նախարար Սէր Ռիչըրտ Հարքորդ այս հոգն ստանձնելու է, ապա թէ ոչ արմատականք կը բռնան բաժնուիլ արդի նախարարութենէն, որ յայնժամ փաքրամասն կը մնայ և հրաժարիլ կը հարկադրի։ Աւելորդ է ըսել թէ պահպանողականք շատ գոհ են որ արմատական կուսակցապետն այսպէս գլխու ցաւ կը պատճառէ Կլատսթոնեան վարչութեան։

ԻՏԱԼԻՈՅ նախարարութիւնը կը պատրաստէ իւր վերջնական հիմնագիր, զոր տեղեկագրով մը պիտի մատուցանէ թագաւորին, և այն տեղեկագրոյն պիտի կցուի արդի Երեսփ. ժողովը լուծող և նոր ընտրութիւններ հրամայող արքայական հրամանագիրն։ Աւելորդ է ըսել թէ իւր ամեն նախորդաց պէս արդի նախարարութիւնն ևս յուսալից է մեծամասնութիւն չահելու։

ԵԳԻՊՏՈՍԻ Միջազգային Առողջապահական Խորհուրդն երկարօրէն վիճաբանեցաւ այն խնդրոյ վրայ թէ Եւրոպեան երկիրներէն եկող նաւերուն նկատմամբ առողջապահական ինչպիսի զգուշութիւնք ի գործ դնելու է։ Անշուշտ աւելի չկրնար սպասուիլ այնպիսի դպրոցէ մը որ որոշ ծրագիր և ընթացք չունի, այլ ամեն ինչ կախում ունի աշակերտաց աւելի կամ նուազ թիւէն։ Խեղճերը այս ինչ չենքը դնեցինք ըսելով մարդ համոզել կ'ուզեն, բայց մի և նոյն միջոցին չեն ծածկեր թէ դպրոցի ներքին յառաջդիմութեան համար այն ատեն բան մը պիտի ընեն երբ բաւական թուով աշակերտ ընդունին։

«Այլ հայ ծնողք այս ամենը հասկնալէ չատ հեռու են, կարծես նոր գտնուած տունը իրենց պիտի ընորհուի, ուստի կը վազեն ինչպէս ոչխարի երամ մը իրարու ետեւ ցատկելով տեղ մը կ'անցնի։

«Մինչեւ իսկ ազգային պաշտօնեայներ և քահանայ այս խոտոր ընթացքին կը հետեւին, առանց մտածելու թէ ազգին դրամով կ'ապրին, բայց օտարին համար զաւակ կը պատրաստեն, քանի որ իրենց զաւակ՝ զուրկ մայրենի կրթութենէնէ՝ անուամբ միայն հայ եկեղեցւոյ զաւակ կրնայ մնալ և աւելի ոչինչ։

«Պատուելիները կը խրախուսուին և խրախուսուելու ալ շատ իրաւունք ունին. զի Բարբերդէն, Սիւնթապէն և այս կարգի տեղերէ գալ Իզմիրի պէս տեղ մը իբր լուսաւորիչ ընդունուիլ պրոտիկ փառք չէ, և մինչեւ իսկ տունէ տուն կը շրջին և գիտեմ տուն մը, առաջնորդարանի պաշտօնեայի տուն մը, ուր բողոքական դպրոցի տեսուչը դացած և տանտիրոջ երկու զաւակները առլիւը ձգելով դպրոց տարած է նոր տարեշրջանի առթիւ։

«Ի՞նչ այսքան եռանդ և փոյթ այն բողոքական պարոններու կողմէ, միթէ կ'երկնչին որ հայ մանկտին անուս կը մնայ, թէ իրենց նպատակին համար, և ինչպէս Ռուսական Խորհուրդը ըսած է, կրօնական-շահախնդրականնպատակ։

«Սակայն իրաց այս վիճակին առջեւ մեր Ռուսական Խորհուրդն անտարբեր չի գտնուիր, և ինչպէս իւր նախորդը նոյնպէս և արդի Խորհուրդն, որ նոյնին կրկնութիւնն է գրէթէ իւր կազմութեամբ, չէ թէ միայն դժգոհելով, տրտնջելով կը բաւականանայ, ինչպէս ցոյս վայր, այլ և կը գործէ։ Ոչ միայն կ'աշխատի և կը յաջողի ազգ. երկսեռ վարժարանները բարեփոխել և արդէն իսկ զգալի արդիւնքներ յառաջ բերել, այլ և թէ Առաջնորդ Մ. Հր և քահանայից միջոցաւ և թէ անձամբ կ'աշխատի հասուցել ծնողները թէ ինչ վնասակար ընթացքի կը հետեւին, թէ ինչ առաւելութիւններ ունին հայ վարժարաններ օտար վարժարաններէն և թէ ինչ յարմարութիւններ ունի երկրին և եկեղեցւոյ հոն արուած կրթութիւնն և ըստ կարի յաջողած է ու կը յաջողի։ Մաղթենք որ ուրիշներ ևս ձեռնտու դանուին Ռուսական Խորհրդոյ նուիրական աշխատութեան մէջ, որ օրուան չարիքին առջեւ առնելու վսեմ նպատակն ունի։

«Անշուշտ ասով չի կրնար այս անդամ ևս խորհ մը դրուիլ Պոլսեցի եւ Զմիւռնիացի Հայոց մէջ։ Չի այս երեւոյթ պէտք չէ մանաւորապէս Իզմիրի Հայոց մէջ տեսնել։ Պոլսեցի Հայն ալ աւելի կամ նուազ դերծ չէ այս ունայնութենէն, և ո՛չ միայն Հայն, այլ և նուազագոյն ասոիճանաւ մը Յոյնն եւ միւս հասարակութիւններ։ Մինչեւ իսկ Բիւս, որ զուտ յունական քաղաք մ'է և ունի ոչ միայն նախակրթարան այլ և միջնակարգ վարժարան, կը գանգատի թէ մաս մը յոյն աշակերաք տեղւոյն Լատինաց դպրոցը կը յաճախեն։

«Սակայն այս պարագաներ եթէ մասամբ կրնան մեր ցաւը մեղմել, միւս կողմէ պէտք չէ որ գմեղ անտարբերութեան մատնեն, այլ ինչպէս ընդհանուր վտանգի մը առջեւ ամեն ոք ինքնապահպանութեան կը դիմէ, այս խնդրոյ մէջ ևս մենք զմեզ պահպանելու աշխատինք, թէ մէկ կողմէ ամբոխի սխալը ցոյց տալով և թէ միւս կողմէ մեր վարժարանները բարելաւելով։»

ԲԱՐԻ ԾԵՐՈՒՆԻ ՄԸ

[ՆՈՐԱՎԷՊ]

Կը յիշե՞ս, ընթերցող, Նափոլիցի փիլիսոփան որուն հետ ծանօթացանք Ժամանակաւ։ Ընտիր բնաւորութիւն մը, ոսկիէ սիրտ մը ունէր, «պատուական մարդ» մը բառին բուն նշանակութեամբը։

Պիտի համարձակի՞նք նոյնն ըսել այն անձին նկատմամբ զոր այսօր կը ներկայացունենք։ Աւա՜ղ, ոչ։ Սակայն, բաւական բարեքիկ երեւոյթ մը ունէր կամ լաւ ևս ունենալ կը ճգնէր։ Առաջին նայուածքով, առանց ուշի ուշով քննելու, անիկա ևս «պատուական մարդ» մը կրնար կարծուիլ։ Որ բոլորովին ինքզինքը տուած է սիկառի ծայրերու առուտուրին և որուն փառաբերութիւնն այդ առուտուրէն հանած հաժետ շահէն անդին չէր անցներ։

Սակայն պէտք չէր վստահիլ այդ բարի ծերուկին, բան մը որ արդէն կը յայտնուէր իր ակնարկին արտայայտութենէն, միշտ խուզարկու, լրտեսող, դիտող, իբր դարանակալ լաւ առիթի մը։ Ի՞նչ ըրած էր երիտասարդութեան ատեն այդ մարդը, որուն մարմինը պահած էր իր կորովն հաստակամ գրչագոյն մազերուն և սպիտակ մօրուքին որ կը շրջանակէ կորովի մնացած այդ դէմքը։ Ոչ ոք գիտէր, չէր ուզեր պարծենալ, և անոր ոչ մէկ բարեկամը ոչ մէկ մտերիմը կը ճանչնային։

Սիկառի ծայրեր հաւաքողը այն տիպարներէ մին է որոց նման ի զուր է փնտռել Նափոլիէ զատ ուրիշ տեղ։ և իր արհեստը ընդհանրապէս կարծուածէն աւելի շահաբեր է։ գիշեր ցորեկ դէմդ կ'ելնէ՝ թափառելով Նափոլիի փողոցներուն մէջ, ամենէն աւելի սրճարաններուն և ճաշարաններուն շրջակայքն ընտրելով։ Սիկառի ծայրեր կը փնտռէ անշուշտ, բայց շատ անգամ կը պատահի որ աւելի կարեւոր բաներ կը գտնէ։ Արդ, կը բաւէ նայել մեր գիւղացիին՝ հակոնալու համար թէ ինչ խղճի խայթէ ետ կեցող, դիպուածին իրեն զրկած բախտերէն օգուտ չքաղող մարդ չէր։

Ըսինք թէ ոչ բարեկամ, ոչ մտերիմ ունէր։ Ոչ մին անոնց՝ ոլոր կը տեսնէին անոր կողաքմակ անցնիլը սիկառի ծայրեր Ժողվելու համար, կամ նստած ամայի անկիւն մը զայնս ստկելու համար՝ իր առջեւ գտնուած թուղթի մը վրայ տիտեղ հոտ, ոչ մին, կը կրկնեմ, չէր կրնար ըսել թէ ուսկից կ'ուզար կամ ի՞նչ ըրած էր նա ընդգրկելէ առաջ այս պատուաւոր արհեստ որուն կ'երեւէր թէ հիմակ բոլորովին տրուած էր ինքզինքն։ Սա միայն յայտնի էր թէ Լուիճի կ'անուանէր ինքզինքը, սակիգ զատ ոչինչ։

Սակայն, ատեն ատեն, իրենց վերաբկուներուն մէջ պլլուած ձիւղուններ անոր առջեւէն անցնելու ատենին երախտագիտութեան խորհրդաւոր նշան մը կ'ուղղէին նմա։ Իրենց կերպարանքը, կեցուածքը ցուցնել կը թուէին ընկերային շատ աւելի բարձր վիճակ մը քան սիկառի ծայր ժողվող այդ խեղճ ծերուունն՝ որ միշտ գրգռակներով ծածկուած էր, և սակայն, իրեն ուղղեալ ողջոյններուն մէջ կարելի էր նշմարել տեսակ մը յարգանք,—խորհրդաւոր չէ՞ այս։

Այն օրն յորում իրեն կը հանդիպինք, առատուն կանուխ նստած է այն տակառներէ միայն քով, զորս սայլասներ փոխադրելու վրայ էին Նափոլիի գլխաւոր օթեւներէ մին։ Իր առջեւ տարածած էր տասնեակաւոր չափ սիկառի ծայրեր։ բայց փոխանակ ծանօթ տեսակով դպրելու, կը խօսակցէր օթեւէն մառանապետին հետ։

—Էյ, հայր Լուիճի, ըսաւ սա, առուտուրդ ընտո՞ր է։

—Հը՛մ, աղէկ չէ, պատասխանեց ծերունի վարպետորդին, մեծ ադնուականներ չկան այլ ևս ի Նաբոլի, ամենքն ալ սատակի կծծի, իրենց սիկառը մինչեւ ծայրը կը խմեն։ Դուք ալ նշմարած ըլլալու էք այս բանը, յարեց, ուշի ուշով իր խօսակցին նայելով։ և սակայն այսքան մեծաքանակ գինին ցոյց կուտայ որ ուղեւորներ չեն պակիր։

—Բայց ոչ։ բայց ոչ, բաւ մառանապետը զուարթօրէն ձեռները չփշրելով։ Ամենուէն գանգատելու բան չունինք։ Ս... իշխանը, Պ... մարքիզը, Թ... դուքսը, և շատ մը ուրիշներ ալ։ Ամենքն ալ ադնուականներ, քանի որ այնպէս կ'ըսէք դուք, հայր Լուիճի, և ոչ միայն իրենց սիկառին ծայրերը կը նեսան, այլ առատ պարգեւ կուտան օթէլին պաշտօնեայներուն։

—Ա՛հ, ուրեմն աւելի ադէկ, ըսաւ Լուիճի զուարթ ձայնով մը, ձեր գոհունակութենէն հաճոյք կը զգամ, ինձ կ'ուրախի թէ ալ այնքան չպիտի նեղուիմ իմ անուշն հունձքէս։

—Ադնիւ մարդ մն էք դուք, Լուիճի, յարեց մառանապետը, գրէթէ խանդաղատելով։

—Ի՞նչ գիտցաք, ես ասանկ եմ։ Կարծեմ թէ բախտը միշտ նոյն մարդոց չուրջը դառնալու չէ։ գուցէ իմ կարգս ալ դայ։ Ուրեմն չատ հարուստ մարդիկ ունիք օթէլին մէջ, հէ՞։

—Այո։ Դժբախտաբար ամենէն հարուստը, Թ... դուքսը, որ ամիսուկէսէ ի վեր հոս է դքսուհիին հետ, վաղը չէ միւս օր կը բաժնուի մենէ։ Հռոմ կ'երթայ։ Խօսքը մեր մէջը, շատ անխոհեմութիւն է, վասն զի ադամանդներ և արժէքաւոր թուղթեր ունին, և անցեալ օր իմ առջեւս դուքսն ըսաւ որ հետը մարդ չպիտի առնէ։

—Արդարեւ անխոհեմութիւն է։ Բայց յուսալի է որ գժբախտութիւն մը չի պատահիր։ Դուքսը իմաստուն մարդ մը ըլլալու է, վասն զի իր սիկառներուն երկու երրորդ մասը կը խմէ։ Ասիկա, կը տեսնէք, լուրջ և հաշուոյ բնութեան մը սոյզ նշան է։

Մառանապետը չի կրցաւ ինքզինքը զսպել և խնդաց այն եղանակով որով Լուիճի կը դատէր մարդերը՝ ըստ երկարութեան սիկառի ծայրերուն։ յետոյ իր զբաղման դարձաւ վերստին։

Հազիւ կէս ժամ եղաւ անկից անցնող ձիաւոր մը ետ դարձաւ չտապով սիկառահաւաքին մէկ նշանէն, և չատ մը ծայրեր ընտրեց, թէպէտ հաւանաբար, իր կերպարանքէն դատելով, ամբողջ սիկառներ ծըխելու վարժուած ըլլար։

Այսքան լաւ բախտ մը մը անշուշտ երջանկացուց խեղճ Լուիճին, վասն զի այն օրն և յաջորդ օրը ուրիշ չատ մը ձիաւորներ, յետոյ բաւական յոռի կ

պէտք է դրուին։ Յայտնի է թէ ամէն երկիր նոյն աստիճանի վարակեալ չէ, և ամէն պատուիրակ իւր երկրին չահը կը ջատագովէր։ Խստապահանջներ կը սպառնային ծանր քառանդինա սահմանել Եգիպտոսէն եկողներու դէմ, եթէ Եգիպտոս բաւական զգոյշ չկենայ, մինչ ուրիշներ յանուն առեւտրական չահուց կը բողոքէին շտիզանց խստութեան դէմ։ Վերջապէս, օսմանեան և միւս առաջարկները լսուելէ ետեւ, որոշուեցաւ բժշկական հսկողութեան ենթարկել Եւրոպոյ Մէջերկրական ծովեզերքէն եկած ամէն նաւեր, ի բաց առեալ միայն Թուրքիայէն և Յունաստանէն եկած նաւերն, որովհետեւ այս երկու երկիրներու հնտախտէ զերծ ըլլալն անտարակուսելի է։ Իսկ Սեւ ծովէն և Հիւսիսային ու Պալթիկ ծովէն եկած նաւեր, եթէ արդէն չեն մաքրուած, աւելի կամ նուազ քառանդինա պիտի կրեն, և կամ բժշկական հսկողութիւն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ Ի ՊԱՂԵՍՏԻՆ։—Պ. Ձօն Մըրրէյ, անգլ. մեծանուն հրատարակչին որդին որ իւր հօր յաջորդած է, և Պ. Հէնրի Բամպէյ անգլ. մամլոյն մէջ նամակ մը հրատարակելով կը ծանուցանեն թէ հանգանակութիւն բացուած է գնելու համար գետին մը որ Երուսաղէմի դուռը կը գտնուի, և որուն համար կը կարծուի թէ բուն խակ Սուրբ Գերեզմանն է։ Բէնդրպրըրիի արքեպիսկոպոսը, մի քանի եպիսկոպոսք և բազմաթիւ եկեղեցականք գանգան կարգէ՝ համակիր են այս գաղափարին։ Հանգանակութեան Ա. ցուցակն արտադրած է 1,000 ոսկի, և ընդ ամենայն 6,000 ոսկւոյ պէտք կայ։ Սթանտարտ յունական և մանաւանդ լատինական եկեղեցւոյ կողմէ և ի մասնաւորի Ֆրանսական կառավարութեան կողմէ դժուարութիւն կը գուշակէ։

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

Ադդ. Պատրիարքարանը տեղեկանալով որ պուլկար կառավարութիւնն արգիլած է հայերէն լեզուի ուսուցումը հայոց նախակրթարաններուն մէջ, խնդիրին ուշադրութեան առած է և պէտք եղած դիմումը պիտի ընէ կայս. կառավարութեան մօտ։

Ուսումնական Խորհուրդն իւր նախընթաց օրուան նստին մէջ վաւերացուց Վահան էֆ. Քիւրքճեանի կողմէ պատրաստուած Համաշխարհային Պատմութիւն անուն դասագիրքն և արտօնեց անոր գործածութիւնն ազգ. վարժարանաց մէջ։ Նոյնպէս վաւերացուց Ենովք էֆ. Թէյեանի պատրաստած Նոր Ընդհանուր Իրաւաբանութեան դասագիրքն Ա. տարին որ ակից առաջ մատուցուած էր արդէն Խորհրդոյ քննութեան։

Կարնոյ քաղաքական ժողովին վերակազմութեան առթիւ տեղւոյն Ուսումնական Խորհուրդն ևս ընտրուած ու տեղեկագրուած ըլլալով, հաստատեց Կարնոյ նորընտիր ուսումնական խորհուրդն իւր պաշտօնին մէջ։

Գոհունութեամբ կը ծանուցանենք այս աւուր Պաշտօնականաց մէջ թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան շնորհել Նորատունկեան Վսեմ. Գաբրիել էֆէնտիին, իրաւագէտ խորհրդական Արտաքին գործոց Նախարարութեան։

Կայսերական գնահատման այս բարձր արտայայտութիւնը, որուն կ'արժանանայ Գաբրիել էֆէնտի ի վարձ իր բարւոք և խնամտաշատ պաշտօնավարութեան, խնդութեամբ կը ընդ. Ն. Վսեմութեան բազմաթիւ բարեկամներն ու համակրողներն։

Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ Ծ. Վրդպ. Պալեան ձեռնարկած է յոյժ գովելի աշխատութեան մը, այն է Թուրքիոյ վանքերուն ու մատենադարաններուն մէջ գտնուած հայերէն ձեռագրերու ցուցակին պատրաստութեան։ Առաջին հատորին առաջին տետրն արդէն հրատարակուած է Պաղտատլեան տպարանէն և նուիրուած է Կեսարիոյ Սուրբ Սարգսի վանուց (Տէրէվանք) հայերէն ձեռագիրներուն։ Շատոնց է որ մեր կրօնականներն ընդհանրապէս այսպիսի լուրջ և օգտաշատ աշխատութեան մը նուիրած չէին իրենց անձը, ի բաց առեալ մէկ քանիներէ որոց ընտիր արտադրութիւններ ժողովրդին քերթին մէջ կը յորջորջուին մէկ և պիտի յորջորջուին։ Մենք պէտք ունինք մեր կրօնականներուն գրական արտադրութիւններուն և անոնց կենսաւէտ ներկայութիւներ. արտայայտութեանց, և կարելի չէ երեւակայել թէ ինչ անհատնում նիւթեր կան զոր կրօնականք կրնան արդիւնաւորապէս ի վեր հանել, բացայայտել և պարզել յաչս ժողովրդեան, որ կրնայ ճարակ գտնել այդ արտապարար նիւթոց ծանօթութեան մէջ։ Յաւալի է որ այս ըմբռնումը չունին մեր բոլոր Ս. Հայրերն որոց կոչումն արդէն իսկ զրկիս մեն է որ իրենց անձը նուիրեն այսպիսի մատենադրական ու բանասիրական երկերու։ Գեր. Տրդատ վարդապետի խղճամիտ աշխատասիրութիւնը կրնայ խրախոյս և օրինակ հանդիսանալ իր նմաններուն։

ԱԶԳ.—Դրագիր մը կը խնդրուի առևտրական տան մը կողմէ մօտակայ գաւառի մը համար, պէտք է գիտնայ հայերէն տառերով և թուրքերէն լեզուով լաւ կրկնատոմար բռնել։

ՄԱՍԻՍ

Մ.ա.ս պիտի հրատարակուի վաղը հետեւեալ բովանդակութեամբ։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ. ԳՐԻԳՈՐ ՁՕՀՐԱՊ
ԴԱՐԱՎԵՐՋԻՑ ՀԻԻԱՆ-ԴԸ (քերթուած) ՍԻՊԻԼ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՆ ԸՆԹԱՑՔԸ
ԴԱՐՈՒՍ ՄԵՋ ԳԱՌՆԻԿ ՖՆՏՐԼԵԱՆ
ԹԱՂՈՂԸ (երգ) Մ. ԱՃԷՄԵԱՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ
ԱՌՋԻ ՍԷՐ, ԱՌՋԻ ԲԱ-ՐԻ (սորավէպ) ԳՐԻԳՈՐ ՁՕՀՐԱՊ
ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԻՆ ՎՐԱՑ ՄՈԼՈՐԱԿ

Անորոշ չուրջեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԵՐ. — Ադրիանուպոլսոյ առեւտրական դատարանին նախագահ անուանեցաւ Սամի էֆէնտի, նախորդ նախագահ առեւտրական դատարանին Պաղատի։

Բուլկարիոյ Պէյլերպէյլիի ատենական տրուեցաւ վաճանեալ Շերիֆ Ապտիւլմաթլէպ էֆէնտիի թոռներէն Այի ձաֆէր պէյի։

Իւրայի երկրորդ ատենական՝ Ճիտտէի գայմագամ Իսմայիլ Հագգը էֆէնտիի։

Սանիյէ Միւթէսմիզի ատենական՝ Մոլայէն նախարարութեան տպարանին տնօրէն Ֆուատ պէյի։

Սանիյէի երկրորդ ատենական՝ արտաքին թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Թահսին պէյի և ընդհանուր վիճակագրութեան դիւանին դեր-տնօրէն Օսման Նուրի պէյի։

Երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Վսեմ. Կէչէր էֆէնտիի և Նորատունկեան Վսեմ. Գաբրիել էֆէնտիի։

Երրորդ կարգի Օսմանիյէ՝ Ե. զօրաբանակին (Սուրիա) 10րդ զօրաբաժնի 19րդ կիսաբաժնին հրամանատար Միրլիվա Մէհմէտ Լութֆի փաշայի։

Երրորդ կարգի Օսմանիյէ՝ արտաքին թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Շերիֆի էֆէնտիի, չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ նոյն դիւանի քարտուղարներէն Լմին պէյի և չորրորդ կարգի Օսմանիյէ՝ նոյն դիւանի քարտուղարներէն Զեքչի էֆէնտիի։

Զորրորդ կարգի Մէճիտիյէ՝ մասային վերատեսչութեան խորհրդականի օգնական Ալի Բիրա պէյի։

Արհեստական չքդրամ՝ արքունի փողերանոցին պաշտօնեայներէն Ճիլոնը Գրիգոր աղայի, որ նոր դրութեամբ կշիռ մը հնարած է։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ.— Բարձր. Սպարապետը, Ներքին գործոց Վսեմ. Նախարարն և Ոստիկանութեան Նախարար Վսեմ. Նազըմ պէյ երեկ կայս. պալատ գնացին և ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

Ի Բ. ԴՈՒՌՆ.— Արտաքին ու Դատական գործոց և Հանրօգուտ շինութեանց Վսեմ. Նախարարներէն և Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Նորատունկեան Վսեմ. Գաբրիել էֆէնտիէ կավմեալ յանձնաժողովն երեկ եւս ի նիստ գումարուելով հիւպատոսական գործոց վրայ խորհրդակցութիւններ կատարեց։

—Պելճիական դեսպանն և ռուսական, աւստրիական ու ֆրանսական դեսպանատանց գործակատարք երեկ Բ. Դուռն երթալով տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. խորհրդականին հետ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՄՈՒՆԵՐ.—Զինուորագրութեան քննութիւններու կատարումը գաւառակաց կեդրոններէ վերցուելով նահանգաց ու գաւառաց կեդրոններուն մէջ փոխադրուած էր և Մէարէսէներու ուսանողք այդ պատճառաւ գժուարութեան մատնուած և մայրաքաղաքս գալով խաներու ու սրճարաններու մէջ կը բնակէին։ Կայս. Իրատէ մը հրամայած էր որ զանոնք թշուառութենէ ազատելու համար այս տարի զինուորագրութեան քննութենէն ազատ կացուցուին և յանձինս տարի քննութիւնք՝ ըստ առաջնոյն գաւառական կեդրոններու մէջ և մայրաքաղաքիս Մէարէսէներուն մէջ գտնուող ուսանողաց քննութիւնք այ ասա կատարուին։ Կայս. Իրատէն միանգամայն հրամայած էր որ քննութեան համար մայրաքաղաքս եկող և զինուորագրութեան տարիքին մէջ գտնուող ուսանողք, որք խաներու ու սրճարաններու մէջ թշուառութեան մատնուած են, անհրաժեշտ հանգստութեամբ իրենց հայրենիքները ղրկուին Ն. Վեհափառութեան կողմէ շնորհուած դրամական պարգևներն իրենց յանձնուելով ու ճանբու ծախքերնին հոգացուելով։ Կայս. սոյն Իրատէին վրայ տրուած հրամանն ուսանողաց ոմանց սխալ հասկացուած ըլլալով, քննութիւն մը կատարուած էր երեւան հանելու համար այդ թիւրիմացութեան պատճառ եղողները։ Ուստի յետ քննութեան հաստատուելով որ Պոլսոյ Ֆաթիհ թաղի ոստիկանապետ Օսման էֆէնտի այդ հրամանը սխալ հաղորդած է ըսելով որ խաներու մէջ բնակող բոլոր ուսանողք պիտի ղրկուին և թէ մէկ քանի ոստիկանապետներ ևս այդ հրամանը սխալ հաղորդած են, հետեւաբար վերոյիշեալ Օսման էֆէնտին և հրամանը սխալ հաղորդող միւս ոստիկանապետք ու ոստիկանք անմիջապէս պաշտօնանկ եղած և Ոստիկանութեան Նախարարութեան կողմէ հարցաքննութեան ենթարկուած են իրենց նկատմամբ հարկ եղածն ի գործ դրուելու համար։

— Քաղաքապետութիւնը տեղեկագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ թաղապետութեան Բ. Դ. Լ. և Թ. շրջանակաց մէջ թաղեր, փողոցներ ու խաներ մաքրուած, սանիթարական դեղեր թափուած և հանրային առողջութեան վնասող ուտելիքներ ծովը թափուած են։

—Տրապիզոնի կուսակալութիւնը սեպտ. 16 թուականաւ հեռագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ սեպտ. 15էն 16 ևս Տրապիզոնի քաղաքին, մաքրանոցներուն և նահանգին միւս կողմերուն մէջ տարափոխիկ հիւանդութեանց ո և է դէպք չէ պատահած։ Տասն և վեց օրէ ի վեր Տրապիզոնի քաղաքին ու շրջակայից մէջ հնտախտի դէպք չէ պատահած, հետեւաբար շաբաթ մը ևս պիտի սպասուի, և եթէ այս գոհացուցիչ վիճակը շարունակէ՝ յայտնեալ Առողջապահական վարչութենէն արտօնութիւն պիտի խնդրուի քարանթինայի շղթայն վերցնելու համար։

—Ադրիանուպոլսոյ կուսակալութիւնը սեպտ. 16 թուականաւ հեռագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ նոյն գիշերն երկամուղոյ կառախումբով 34 ուղեւորներ ձիրը Մուսթաֆա Փաշա ժամաներ և քարանթինայի ենթարկուեր են։ 25 ուղեւորներ աւարտելով քարանթինայի պայմանաժամն, ազատ անցագիր ստացած են։ Հանրային առողջութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ է։

ԻՏԱԼԱԿԱՆ դաղթականութիւնն հանրագիր մը կը պատրաստէ Հռոմի Առեւտրական և Արուեստից Սենեկին մատուցուելու համար՝ խնդրելով որ ըստ կարելւոյն շուտով հաշտարար ուղանակաւ համաձայնութիւն մը գոյացնէ Օսմ. Հանրային Պարտուց վարչական խորհրդին հետ՝ ի մասին Բուլգարիի երկամուղոյ վիճակահանութեան պարտատոմսից ծանօթ խնդրոյն։ Մայրաքաղաքս գտնուող իտալացի արժեթղթոց կը հաւանին այդ պարտատոմսոց 100ին 72 վճարելու առաջարկին։

ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ.—Ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ և տիկին Նէլիտոֆ երէկ գիշեր, ժամ 2ին մայրաքաղաքս ժամանեցին դեսպանատան պահակ Թիւշէր շքեղեալով և ուղղակի Պերայիւքտէրէի դեսպանատունը գնացին։

—Ֆրանսական դեսպան Պ. Բանսոն Բարիզ հասնելուն՝ տեսակցութիւն մը ունեցեր է արտաքին գործոց Նախարար Պ. Ռիպոյի հետ։ Պ. և տիկին Բանսոն երեք շաբաթէն մայրաքաղաքս պիտի դառնան և ուղղակի Բերայի դեսպանատունը պիտի իջնեն։

—Վիէննայէն կը գրեն թէ աւստրիական դեսպան Պառոն ֆօն Բալիչէ յաջորդաբար քանի մը տեսակցութիւններ ունեցեր է Բանսօքի կոմսին հետ։ Դեսպանը տասնևհինգ օրէն մայրաքաղաքս պիտի դառնայ։

ԵԼՄՏԱԿԱՆ նախարար Նազիֆ էֆէնտի երէկ իւր պաշտօնատեղին երթալու պահուն հիւանդանալով, ապարանքը վերադարձաւ։

ՄԱՆՐ ԴՐԱՄՆԵՐ.—Աբքունի փողերանոցն յառաջիկայ երկուշաբթի օր պիտի սկսի մանր դրամի վերածել Օսմ. կայս. Պանքայի կողմէ ղրկուած 20,000 ոսկինոց մէճիտիյէները։ Աբքունի փոդերանոցը նոյնպէս ի մօտոյ պիտի սկսի հարիւր հազար ոսկինոց մանր դրամներու պատրաստութեան։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.—Հոտէ յայտնէ սեպտեմբեր 15 թուականաւ կը հեռագրեն թէ հնտախտն սկսած է թեթեւնալ անդ։ Սեպտեմբեր 9էն 10, ի Հոտէյտա 14 դէպքեր ու 11 մահեր պատահած են։ Սեպտեմբեր 10էն 11՝ 14 դէպք ու 7 մահ։ Սեպտեմբեր 11էն 12, ի Պէյթիլֆաղիյէ, ի Զէյտիյէ, ի Պաճիլ և ի Լահիյէ՝ ո և է դէպք չէ պատահած։

—Վանէն սեպտեմբեր 17 թուականաւ կը հեռագրեն թէ Աղբակ ու Արճէշ գաւառակաց մէջ հնտախտի դէպք չէ պատահած և թէ նահանգին մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

Ըլիտիի վարչութիւնը պէտք տեսնելով իր պարտատոմսերու արժէքին ուքանկութեան նկատմամբ ինչ ինչ բարեփոխումներ ի գործ դնել և առ այդ յաւելուածական տրամադրութիւն մը նշանակել յատուկ պայմանագրոյն մէջ, տեղեկագիր մը մատուցած է Ելմտական Նախարարութեան։ Մալիյէի մէջ կազմեալ յատուկ յանձնաժողովն ևս առ այդ հաւանելով տեղեկագիր մը պատրաստուած և մատուցուած է Բ. Դրան։ Նախարարաց Խորհուրդն այդ խնդրոյն վրայ խորհրդակցութիւններ կատարելով, արդիւնքը մատուցուած է Վեհ. Սուլթանին։

—Ծխախոտ մշակողներու և Բէժիի վարչութեան միջև եղած խնդիրները կարգադրելու համար կազմեալ յանձնաժողովն վաղը պիտի աւարտէ իւր խորհրդակցութիւններն և իւր տեղեկագիրը Ելմտական Վսեմ. Նախարարին նախագահութեամբ կազմեալ ուրիշ յանձնաժողովոյ մը կողմէ քննուելէ յետոյ ըստ այնմ պիտի տեղեկագրուի Բ. Դրան։

ՓԱՍՏԱՐԱՆ Թընկըր Սիմոն էֆէնտի պատժական տանին առջև տեղի ունեցած դատավարութեան մը պահուն դատարանին դէմ խիստ լեզու մը գործածած ըլլալով, նախնական դատարանի ընդհանուր դատախազի օգնականին պահանջմամբ՝ դատարանն երկու օրուան քանտարկութեան դատապարտած է Թընկըր Սիմոն էֆէնտին։ (Մ—ոդէ)

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ վարչութիւնը Մեծ-Եպարքոսին մատուցեր է ատենագրութիւնն այն նստին յորում վիճաքանուեցաւ 60,000 ոսկւոյ փոխատուութեան խնդրոյն վրայ, Գասըմ-Փաշայի կոյուղիին փակման համար։ Աւասիկ այն պայմաններ որոցմով յիշեալ գումար փոխ պիտի տրուի կայս. կառավարութեան։ 1. Աշխատութիւնք պիտի կատարուին ինն անդամէ բաղկացեալ յատուկ յանձնախումբի մը հսկողութեան ներքեւ. անդամոց երեքը հաշուագէտ, երեքը ճարտարագէտ և երեքն ալ առողջապահական վարչութեան կողմէ նշանակեալ պաշտօնեայներ պիտի ըլլան։ 2. 60,000 ոսկին կը տրուի առանց տոկոսի։ Ելմտական նախարարութիւնը առողջապահական վարչութեան պարտական պիտի ըլլայ 78 հազար ոսկի, որուն 60,000 ոսկին կը ներկայացուցէ այժմու փոխ տուածը և 18,000 ոսկին ալ ժամանակաւ փոխ տուած մէկ գումարը։ Այս 78 հազար ոսկին առողջապահական վարչութեան պիտի վճարուի 1897էն սկսեալ ամէն տարի 5000 ոսկի հատուցանելով։ 3. Փոխատուութիւնը պիտի վճարուի մաս առ մաս, կայուղիին փակման համար կատարուած աշխատութեանց համեմատութեամբ։ 4. Աշխատութիւնք պիտի սկսին ձմրան սկիզբն, ըստորում ամրան մէջ անոնց կատարումը կրնայ անպատեհութիւններ յառաջ բերել հանրային առողջութեան համար։

ԹԷՆՊԼԻԻԻ վաճառականք ոմանք որոց ապրանքները Կ. Պոլսոյ և քանի մը գաւառաց, մասնաւորապէս Կարնոյ մաքատան մէջ կը մնան և Թէնպէքիի ընկերութիւնը չի գներ զայնս, կայս. կառավարութեան դիմած էին։ Բ. Դուռն հրամայեր է վաճառել այդ մթերեալ ապրանքներն որք 30,000 ոսկւոյ արժէք մը կը ներկայացուցեն, և որոց անչարժ մնալովը թէ վաճառականները կը վնասուին և թէ տէրութեան գանձը որ մաքատուրք կ'առնու անոնցմէ։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ դրամատունն որոշած է տիպար-ագարակներ հաստատել ի գաւառս։ Այս առթիւ «Մոնիդէօռ» կ'առաջարկէ որ յիշեալ դրամատունն գլխաւոր նաեւ երկրագործական ցուցահանդէս մը կազմակերպելու, որ յառաջիկայ տարի տեղի ունենայ Թուրքիոյ գլխաւոր նահանգաց միոյն մէջ, օրինակի համար Յիզմիր։

ՔՍԱԿԱՀԱՏ.— Նախընթաց գիշեր դերհագաբպետ Մուսթաֆա էֆէնտի ժամը 6ին ի Բերա, Սանդրալի գարեջրատան մտ խանութի մը առջև քիչ մը հանգիստ առնելու համար կեցած պահուն Տոլապտերէ բնակող Անտոն և իր ընկերները, Բիրեագօ, Բոգմա, Թադէոս, Թորոս որք մասնաւոր բնակութիւն մը չունին և փոդոցները կը թափառին, յիշեալ էֆէնտիին կը մօտենան յարգական ձեւերով և անոնցմէ երկուքը խորունկ խօսակցութեան մը կը բռնուին անոր հետ, մինչ միւսները սառայելական ճարպիկութեամբ մը Մուսթաֆա էֆէնտիին բաճկոնակին գրպանէն կը թռցուցեն ժամացոյցը։

Սակայն Մուսթաֆա էֆէնտի առաջին ակնարկով հասկցած ըլլալով թէ ինչ խմորէ չունուած մարդեր էին իր անակնկալ խօսակիցները, զգոյշ կը կենար, և զգալով գրպանին թեթեւացումը, անմիջապէս կը բռնէ քսակահատներէ երկուքը. տեղի ունեցած աղմուկէն ոստիկաններ վրայ հասնելով Թորոսէն զատ միւս բոլոր գիշերայածները կը ձերբակալեն. բայց դժբախտաբար ժամացոյցը Թորոսին ձեռքը մնացած էր, որ փութիպ պնդութեամբ կը փնտռուի։ Ժամացոյցը տասը ոսկի կ'արժէ ըստ։

ՄԱՎՐՕԵԷՆԻ ՊԷՑ, օսմանեան հիւպատոս Մարսիլիոյ, երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ «Էլիզապէթ» մարտանաւն, որ ՃԷՆովէն կուգար, երէկ Կ. Պոլսոյ նաւահանգիստը ժամանելով Սալը Փաղարի առջև խարսխեց եւ մէկ քանի օրէն դէպ ի Սեւ ծով պիտի ուղեւորի։

ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց նախարարութեան մասնագէտ խորհրդական Պ. Կարանի պաշտօնավարութեան պայմանաժամն կայս. հրամանաւ այս տարուան համար եւս նորոգուած է։

ՆՈՐ ՀԵՆԵԼԱՆԻՒ ՄԸ.— «Թանթանթանիւսբոյ» կը պատմէ թէ Բէժիի վարչութեան Գարթալի ճիւղին նախորդ պաշտօնեայ Պ. Զէլինկէր նոր հեծելանիւ մը շինած է ծովու վրայէն երթալու համար։ Պ. Զէլինկէր այդ հեծելանիւով կ. Պոլսէն Գարթալ անցեր է։

ԵՂԵՌՆԱՒԱՏ ատեանն երեկ ցկեանս շղթայակապ աշխատութեան դատապարտեց Զաքար անուն մարդ մը, որ յեմիրկէն նախկին Խտիվ Իսմայիլ փաշայի ապարանքին խոհանոցը դիտմամբ բռնկցնելով այրած էր։

ԱՐԿԱՒՐ.— Երէկ ժամ 10ին ի Մէճարարանս Բէճէպ անուն իշխաւոր մը շոգենաւէ ելնելու պահուն՝ ոտքը չուանները ոլորքին մէջ մնալով կոտրեցաւ։

ԳԱՍԱՊՈՒՑԻ երկաթուղւոյն հաշիւները քննելու համար՝ Կայս. հրամանաւ յանձնաժողով մը կազմուած է ընդ նախագահութեամբ Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Վսեմ. նախարարին։

ԽԱՐԴԱԽՈՒԹԻՒՆ.— Խագիւղ, Եէնի Մահալլէ բնակող Պոխոր Ավրամ անուն հրեայ մը 600 ոսկի իբր աւանդ յանձնած ըլլալով նոյն թաղը բնակող Նիրկի վաճառական Նիսիմ Բաֆիկի, երբ ետ կը պահանջէ իր աւանդը, սա կուրանայ՝ այն ատեն Պոխոր իրեն փոխանորդ ընտրելով Ղալաթիա, Թիմուր Խան հաստատեալ վաճառական Ռուբէն էֆէնտին, Նիսիմին դէմ դատ կը բանայ Հուգուգի դատարանին առջև։ Դատավարութեան մէջ Պոխոր կը յայտարարէ թէ ինքն ալ փոխանորդ մը պիտի կարգէ իրեն և հետեւապէս կը խնդրէ որ դատը տասն և հինգ օր յետաձգուի։ այս առաջարկ օրինական նկատուելով կ'ընդունուի։ Խեղճ պահանջատէրը տասն եւ հինգ օր պայմանաժամին աւարտելուն սպասելու վրայ ըլլայ, անգին Նիսիմ Խագիւղ բնակող Բեմալ անուն ատորին կարգի փաստաբան մը հետն առնելով պահանջատիրոջ փաստաբան Ռուբէն էֆէնտիին կը դիմէ և խնդիրը հաշտարար կերպով վերջացնելու համար առաջարկ մը կ'ընէ նմա։ Ռուբէն էֆ. կը խոստանայ պարտատէրհակը պոխորին ձեռքէն առնել և իրեն տալ, եթէ 50 ոսկի վճարուի իրեն։

Մէկ քանի օր անցնելէն ետք, մինչ Պոխոր օրերն ու ժամերը կը համրէր անձկագին, մեր հրեան կը հաւանի 50 ոսկին վճարել և երեքն ի միասին, ինք Բէմալ և Ռուբէն էֆէնտի Մալթէզ փողոցին մէջ գարեջրատուն մը կը հաւաքուին։ Նիսիմ Բաֆիկ գործն հաշտարար եղանակով վերջացնելու յատուկ գիրն հանելով Ռուբէն էֆ. և Բէմալին կուտայ, և լրը կանխավճար հինգական ոսկինոց երկու պանքոտոմս կը յանձնէ անոնց, սակայն այս երկու արժանաւոր փաստաբաններուն նպատակն է եղեր խաբել խեղճ հրեան։ բարեբախտաբար նոյն պահուն Բերայի գասարանին ընդհ. դատախազ Միխայէլ էֆէնտի, որ անկից կ'անցնէր, խնդիրն իմանալով, ներս կը մտնէ և յետ քննութեան ճշմարտութիւնը երեւան հանելով, կ'առնէ հաշտարարութեան գիրը և տեղեկագիրը կը պատրաստէ այս անշահ խարդախութեան։ (Մ—ոդէ)

Հետեւեալ նամակը մեզ ղրկուած է ի հրատարակութիւն։

Տէր,

Ժամանակ մը առաջ հրդեհի ապահովագրութիւն մը սացայ Լանքաշայր ապահովագրական ընկերութենէն ի Մանչէսթըր, որոյ ներկայացուցիչն է հոս Պ. Բիշարտ Պոնդ։ Ի Բերա, Բանչելերիա փողոցին մէջ վերջերս տեղի ունեցած հրդեհէն դժբախտաբար կորուսի իմ գոյքերս, և այժմ կուգամ ձեր լրագրով շնորհակալութիւն յայտնել յիշեալ ընկերութեան և իր գործակատարին, որ փութով և առատաձեռնօրէն կարգադրեց իմ պահանջքս։

Ուստի այս ընկերութիւնը կը յանձնարարեմ ամէն անոնց որք հրդեհի դէմ ապահովուիլ կը բաղձան։ Շնորհակալիքս յայտնելով նամակիս հիւրընկալութեանն համար, եմ ձեր խոնարհ ծառայ

244 ԱԼԵՔ. ՄՈՒՍԹԱՖԱԱ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ նոր ժամանակացոյցն որ վաղուընէ սկսեալ պիտի գործադրուի ընդ մէջ Կ. Պոլսոյ և Բիւրեբ Զէքմէճէի հրատարակած ենք այս աւուր չորրորդ երեսին մէջ։ 246

ՅԵՌԱԳԻՐ

ԱՅՍՕՐՈՒԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱՅԻՆ

Անգլիոյ Պանքային երէկ հինգշաբթի (29 սեպտմ.) հրատարակեալ շաբաթական հաշուեկշիռն հետեւեալ տարբերութիւնները կը ցուցնէ, բաղդատմամբ անցեալ շաբթուան։

Պարտատուներու պահեստէն պակսած է 271 հազար անգլ. ոսկի։

Պանքոտոմսերու պահեստէն պակսած է 373 հազար ոսկի։

Գանձելի փոխանակագրաց և այլ առևտրական թղթոց մթերքէն պակսած է 672 հազար անգլ. ոսկի։

Հետեւապէս, Անգլիոյ Պանքային դիրքը վերջին եօթնեկին մեծ տարբերութիւն չի ցուցներ, քանի որ իւր պահեստը այժմ այնպէս կը համեմատի իւր յանձնառութեանց ինչպէս 49 % կը համեմատի առ հարիւր։ Նախորդ շաբթուան համեմատութիւնն էր 49 $^{10}/_{11}$ առ հարիւր։

Այս պայմանաց մէջ, Անգլիոյ Պանքային Տնօրէն Խորհուրդն իւր երէկի հինգշաբթի աւուր նստին մէջ որոշեց զեղչել սակը 100ին 2 պահել։

ՎԻԵՆՆԱ, 28 Սեպտ.— Աթէնքէ կը հեռագրուի առ Նայէ Թրայէ Բրէսէ թէ հելլէն կառավարութիւնը Բ. Դրան դիմած է ի բերեւ գերիչխան Տէրութիւն իւր միջամտութիւնը խնդրելով, որպէս զի Պուլկարիոյ մէջ յունական վարժարանք վերաբացուին և յոյն լեզուաւ դասախօսութիւնք ազատութեան շարունակուին։

ԱԹԷՆՔ.—Աբթիոն հելլէն թնդանօթակիրն որ Լոյտի Թէպէ շոգենաւուն օգնութեան գացած էր, Վոլոս դարձաւ, ուղեւորներն ու թղթատարական պայուսակները բերելով։

ՓԱՐԻԶ.—Երէկ հոս և արուարձանաց մէջ 34 վարակեալ 16 մեռեալ։ Ի Հավ. 4 վարակեալ 2 մեռեալ։

—Սուէզի ջրանցի խորհուրդը ջրանցէն նաւեր անցնելու սակն 50 սանտիմի իջուցտակառաջարկին, յունուար 1էն սկսեալ։

— Բորթօ-Նովոյէ կը հեռագրուի թէ Տակպայի պատերազմի դաշտին վրայ Տահոմէցիներէն շատ մը հրացան և ռազմամթերք առնուած են։ Այս զէնքեր գերմանական գործեր են։ Քամիուշտի կարգ մը ծրարներու վրայ արձանագրուած է «Քասել 1873»։ Գնդ. Տոտսի զօրախումբն այժմ Ուէմէ գետին վրայ կը գտնուի։

ՔՐԱՔՈՎԻԱ.—Այսօր հնտախտէ մարդ մը բռնուեցաւ հոս, և ուրիշ մը ի Թատոբրիցէ։

ՊԵՐԼԻՆ.—Երէկ յԱլթոնա 9 վարակեալք 6 մեռեալք։ Շէդէրնի մէջ 5 վարակեալ եւ ի Համպուրկ 70 վարակեալ 25 մեռեալ։

—Պ. Ֆոն Միւլլէր, գերման գործակատարն ի Կ. Պոլիս, դեսպանատան խորհրդական անուանեցաւ։

—Պ. Զէլլէ Պերլինի քաղաքապետ ընտրեցաւ։

ՆԻՒ-ԵՈՐՔ.—Պոհեմիա շոգենաւուն ճամբորդներուն մէջ հնտախտէ նորէն երկու անձինք բռնուեցան։

Վակտրան

ՂԱՆԹԻԼ, 18 Սեպտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ	110 $^{1}/_{4}$
3 » Փարիզի »	22 90

ՕՍՄԱՆԵԱՆ ՓՈՇՈՎԻՏԷ

Երէկ երեկոյ գոց. [Միաց. Դ. Սէրի]	24 13
Բերայի մէջ	— —
Աւուրօրուն բացուեցաւ	24 13
Կէս օրին	24 16
Թաղվիլաքը Օսմանիյէ երէկ երեկոյ	— —
» » ժամ 5ին	84

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Փոխառութիւն	Սէրի	53 $^{1}/_{4}$
»	»	32
»	»	24 13

ԲԱՆԿԵՏՈՒՄԻՒ

Օսմանիէ ժէնէրալ	Անգլ. Լր.	5 06
Բրէտի ժէնէրալ	» »	7 30
Պանք տը Բոնս	» »	4 32
Ցոս. Շանտ է վալտօր	» »	4 20
Ըէժի	» »	16 30
Թրամուէյ	» »	590
Բուսէլիի երկաթուղի	ֆր.	93 $^{1}/_{4}$
Բաժնեթուղթ Լաբիսմի	Դ. կ.	83

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 29 Սեպտեմբեր

Ֆրանսական Ռանթ 3 %	99 87 $^{1}/_{2}$
» » 4 $^{1}/_{2}$ %	105 83
Օսմանեան բոնսօլիտ, Սէրի Դ.	22 37 $^{1}/_{2}$
Օսմ. մաբս. արեւմուտք	475 62 $^{1}/_{2}$
Բրիտանիէ Թիւրք (1893)	435
Օսմանեան Երկաթուղի	91 75
» Ըէժիի բաժնեթուղթ	384 37 $^{1}/_{2}$
Պանք Օ

ՎԱՆԱԿԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ

(Ս· ՍԱՐԳԻՍ ՄԵՆԱՍՏԱՆ)

(Շարունակութիւն երեկի թիւէն և վերջ)

Կոչեցեալ Ներեր

Աւելորդ չենք համարիր համառօտիւ յիշել հոս գլխաւորներն այն թղթերէ, որք Ս· Սարգսի վանքին կը վերաբերին, և կը պահուին այժմ ուրիշ կարեւոր թղթոց հետ՝ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն գանձատունը։

1. Բարեյիշատակ Սուլթանէ մը ի խնդրոյ Հայրապետ վարդապետի՝ 1036ին տրուած պերատ մը, որով կը հրամայէ Ս· Սարգսի վանքն ազատ թողուլ մինչեւ 150 հատ ոչխարի տուրքէ (հովուապետական տուրք— ջոպան պէշլիք— այժմ՝ «ոչխարահարի տուրք») և պաշտպանել վանք երթեւեկող հիւրերն և ուխտաւորները, որ բնաւ վնասուց և արգելքներու չհանդիպին։

Բարեյիշատակ Սուլթանն սոյն Պէրատը շնորհած է իւր՝ ի Պարտատ ուղեւորութեան առթիւ, քաղաքս հանդիպած միջոցին, երբ յիշեալ վարդապետն՝ Սուլթանին վանքի առաջին անցած պահուն, ոչխարներ գենած և կայսերական ուշադրութիւնը գրաւելու արժանացած էր։

Վանքն այժմ դուար չանուցաներ, բայց ըստ Կայսերական Պէրատին, միշտ ազատ մնացած է տուրքէ, երբ պահած է դուար։

2· Նոյն բարեյիշատակ Սուլթանէն ի խնդրոյ Պետրոս վարդապետի տրուած Պէրատ մը, որ կը հրամայէ ապահովել վանահօր բնակութիւնը թէ՛ վանքին մէջ և թէ վիճակները չրջապտելու ատեն։

3· Սուլթան Օսմանէն տրուած Պէրատ մը, տուրքերու մասին եղած պահանջմանց համար բողոքուած լինելով կը հրամայէ վանքի և եկեղեցւոյ կալուածներէն տուրք չառնել։

4· Սուլթան Մահմուտ Բ. է՝ Կ. Պոլսոյ Կարապետ Պատրիարքի խնդրանօք 1240ին տրուած հրովարտակ մը կը հրամայէ որ ի վաղ ժամանակաց հետէ հայոց պատկանող Ս· Սարգսի վանահօրէն և բարձր ու ստորին կարգի միաբաններէն ո՛և է տուրք չառնուի· հոն կրօնական արարողութիւնը ազատօրէն կատարուին ևն։ ևն։

5· Սուլթան Ապտիւլ Մէճիտ Ա·է՝ Կ· Պոլսոյ Պատրիարքին խնդրանօք 1257ին շնորհուած հրովարտակ մը, ամէն օտար միջամտութենէ ազատ կը կացուցանէ Ս· Սարգսի վանքն ու անդգտնուած Եփրեմ Խուրիի քարայրը, որոց Հայոց սեփականութիւն լինելը հաստատուած է։

6· Սուլթան Ապտիւլ Մէճիտ Ա·է 1275ին շնորհեալ հրովարտակ մը որ՝ ինչպէս արդէն յիշեցինք, վանքի տաճարին ուելի ընդարձակութեամբ նորոգման և Հիւրանոցի ու Դպրոցի հաստատութեան արտօնութիւն կը շնորհէ։

7· Եւ՝ Եփրեմ Խուրիի խնդրոյն վերաբերութեամբ հայոց իրաւունքը հաստատող այլ և այլ ժամանակներ տուեալ զանազան հրամաններու և նշաններու հաւաքածոյ մը, զոր որոշ որոշ մանրամասնել երկար կը լինէր։

* *

Դալով սոյն վանքի արդի վիճակին, հարկ կ'ըլլայ հաճութեամբ խոստովանիլ թէ գաւառիս այժմեան Վանահայր Առաջնորդ Մխիթարեան Սրբազանի օրով, և ուելի ճիշդն, իւր մասնաւոր հոգածութեամբ՝ շինուածական մեծ կերպարանափոխութիւն կրած է։

Վանքը այցելող, այժմ չ'տեսներ հիներն մնացած այն տխրերեւոյթ խարխուլ շէնքերու և ոչ մին· անոնց յաջորդած են այժմեան ճարտարապետական պահանջմանց համաձայն ճաշակաւոր նոր շէնքեր· վանական առաջնորդարան, միաբանաց բնակարանք, հիւրանոցք, զանգակատուն, մեծ եւ փոքր սրահներ, խոհանոցք, մուռան ևն· ևն։

Նորին Գերապատուութիւն, ինչպէս գոհութեամբ կ'իմանանք, հաստատ մտադրութիւն ունի Հայ հասարակութեան ծախիւք բերուած ջրէն բաժին մ'ալ վանք տանելու, որով ո՛չ միայն վանքը վաղուն ջրոյ տնժիտելի բարիքով օժտուած կը լինի, այլ և իւր յարակից քանի մը անշահաբեր այգիները կրնան արդիւնաւոր զուարճալի պարտէզներու վերածուիլ (*)։

Ցարմէ հետէ վանքը պայծառացած է նորանոր շինութեամբը, ուելի ստուարացած է թիւն դուրսեցի և մանաւանդ քաղաքացի ուխտաւորաց, որք յաճախ կերթան, և երբեմն ընդերկար իսկ կը բնակին անդ, թէ հիւանդք և թէ առաջնորդներ անգամ, պարզապէս օդափոխութեան համար, որուն յոյժ նպաստաւոր է տեղւոյն օդաւէտ և զուարճալի դիրքը։

Արդի Սրբազան Առաջնորդը երկար ժամանակէ ի վեր իւր բնակութիւնը հաստատած է վանքին մէջ, ուր կը գտնուին նաև մէկ վարդապետ և քանի մը աշխարհական միաբանք։ Տեղւոյն մատակարարութիւնը, ընդ հսկողութեամբ քաղաքի Ցմտեսական խորհրդոյն, կը վարեն մին թոշակաւոր և միւսն անթոշակ երկու աշխարհական պաշտօնեայք։

Քաղաքին մերձակայ լինելովը, վանքն այժմ ունի առաւելապէս քաղաքամէջի եկեղեցւոյ մը դիրքը, և քահանայք ամէն կիրակի կարգաւ կերթան պաշտօն և պատարագ մատուցանել անդ, ուր քաղաքէն բաւական ժողովուրդ ներկայ կը դտնուի կրօնական պաշտամանց։

Թէեւ վանքին յատուկ նիւթական միջոցներու չգոյութեան պատճառաւ, ինչպէս անհրաժեշտ էր, վանքը գէթ համեստ վարժարան մ'ալ չունի այժմ, բայց մենք՝ ինչ ինչ նկատմամբք, կրթական տեսակէտով՝ աւելի նպաստաւոր ապագայ մը կը նախատեսենք վանքին համար։

* *

Եդեսիոյ թեմին մէջ գտնուած ուրիշ ծանօթ, բայց աւերակ դարձած վանքերն են հետեւեալք·

1· Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետի վանքն, յորում անձամբ բնակած է Ս· Հայրապետն։

2· Խաչվանդ, ուր փայլատակեալ լուսոյ երեւոյթին տակ, գիշեր մը հանդիպած է ի Պարսկաստան տարուած խաչափայտն, երբ անտի կը վերաբերուէր Հերակլ կայսեր ժամանակ։

Յետ ժամանակաց հոս փոխադրուելով Սբբոյն Գրիգորայ և ընկերաց մարմինք, վանքն ստացած է Նոր Վէրաբանունը։

3· Ս· Աբբոս վանք, որոյ կիցն էր անդրանիկ մեծ հաւատացեալին սմառանոցը։

4· Աբջէնէ վանք։

5· Ս· Եբբէմ Խաչէի վանք։

6· Ս· Սարգիս վանք՝ Եդեսիոյ թեմին պատկանեալ Էհնեէ գիւղի հարաւային-արեւմտակողմը կը դտնուի։

7· Նոր Սիոն, Ճիպլին գիւղի մօտերը, զոր թրքախօս տեղայիք՝ աղաւաղութեամբ Նորբոր կ'անուանեն։

8· Ս· Բարսեղ, նոյնպէս Ճիպլինէն քանի մը ժամ հեռի, զոր ևս տեղացիք աղաւաղելով՝ կը կոչեն Բէջբոն։

Այս կողմերն է նաև ի Հռոմ-կլայ, Ս· Նէրսէհ Շնորհալւոյն Կաթողիկոսական հոյակապ վանքն, Եդեսիոյ այժմեան թեմի շրջանակին մէջ, զոր չենք ուզեր սակայն իբրեւ վիճակային պարզ վանք մը, մեր սոյն վանականին կարգն անցնել։

Գ· Կ· Ո·

Եդեսիա

ՎԵՐՋ

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ

ԵՍ ԱՄԱՌԱՆՈՑ ՁԵՄ ԵՐԹԱՐ

Ամէն անոնք որ իմ ներքին վիճակիս տեղեակ չեն, և գիս միմիայն արտաքին երեւոյթէս — վճարումներուս կանոնաւորութենէն, գործերուս կոկիկութենէն, լաթերուս մաքրութենէն, տանս ընդարձակութենէն և ընտանեացս անդորրութենէն— կը դատեն, ամէն տարի գարնան գլուխս կուտեն թէ ի՞նչու ամառանոց չեմ երթար։ Եթէ միայն բարեկամներ ու ծանօթներ ըլլային այս դիտողութեանց հեղինակները, մինչեւ մեկ ասորեան ներելի կը դառնայ, սակայն ցաւալին այն է որ կինս ալ անոնց հետ միացած, մերթ կրկնուելով՝ մերթ համոզելով, մերթ երես ծռելով և մերթ արժանապատուութիւնս շոշոփելով, ամէն օր տարբեր պատրուակներու տակ առիթներ կոտրեցէ «Ամառանոցի» վէճը յուզելու և քեզնիս համը փախցնելու։ Եւ որովհետեւ մեր տան մէջ օրուան խնդիրը այլ ևս ամառանոցն է, իրիկուան չուկայէն վերադառնալուս պէս՝ փոքրիկները վիզս կը պլլուին և համբոյրներու անվերջանալի տարափի մը մէջ «հա՞, ազոր հայրիկ, մեղի վաղը եաղլ՞ի պիտի տանիս, հա՞, կը տանի՞ս հայրիկ... ես չաքար չեմ ուզեր· եաղլը՝ երթանք հայրի՛կ, ազոր հայրիկ ես դուն»

Եկէք դուք հայր եղէք ու ասոր մէջէն ելէք։

Տէ՛ր Աստուած, ես ո՞ւր, ամառանոց ո՞ւր· անգամ մը մէկը չը հարցներ թէ ի՞նչ վիճակի մէջ եմ· միթէ կանոնաւոր եւմտացոյց մը ունենալը մե՞ղք է· միթէ գործը գլխանալը յանցա՞նք է· բայց որո՞ւ կը սես· կրեւի թէ ծանօթներս ալ մեր ընտանեաց տակը կողմը հասկցած են և ամեն անգամ որ կինոջս հետ տեղ մը գտնուիմ «ամառանոցը» մէջ կը նեռեն ու կսկսին ժամերով փոխն ի փոխն թուել այն առաւելութիւնները զոր ձեռք կը բերէ մարդ ամառանոց երթալով· և այն չարիքները որք կը ծնին ամառանոց չերթալէ· սակայն ինչ որ ալ ըսեն մաղիս չափ ազդեցութիւն չուներ վրաս, որովհետեւ ուրիշները որքան ալ որ խելքը ըլլան՝ ինձ չափ խելք չեն կրնար հասցնել իմ գործերուս և ես բացայայտ կերպով կը նշմարեմ որ եթէ անգամ մը արտաքոյ կարգի ծախքով մը երեւմտացոյցս խանգարեմ, յաւիտեան կորսուած օրս է և հեղ մ'ալ շտկուելիք չունիմ։

Ու եղաւ որ, առտու մը կինս անկողնէն չելաւ·

—Մանոլիկ հանը՛մ, Մանոլիկ հանըմ։

—...։

—Ո՞ւր տեղդ կը ցաւի, Մանոլիկ հանըմ։ հիւա՞նդ ես։

—Ը՛հ, չիյտեմ, տէրմանաղութիւն մը· մէջքս, գլուխս՝...։

Իսկոյն բժիշկ մը, դեղագիր, եանօս· և չարաթ մը վերջը կը պատրաստուինք Սարբեար օդափոխութեան երթալ։ Բայց ո՞ւր կերթաս սովորական լաթերով· ասանկ բան չելլար ամենեւին, ուստի նոր ձեռք մը լաթ ինձ, երկու ձեռք կնոջս, երկերկու ձեռք զաւակներուս, գումարը քսան ոսկին անցաւ և գնա սիրելի է երկանց։

Սարեար ենք· կինս օր ըստ օրէ կ'առողջնայ և զաւակներս այծեաներու նման կոստոստեն, ուրախութիւն մը, խնդութիւն մը, առողջութիւն մը ողողած է մեր ամբողջ ընտանեքը և միմիայն ես եմ որ մաս չունիմ այս ընդհանուր առողջութենէն, խնդութենէն ու զուարճութենէն, որովհետեւ ամէն անգամ որ լիլեմ այս ծախքերը, Պօլսոյ տանս վարձքը, ամառանոցի 25 ոսկին, չոգենաւին ամսականը, ամէնօրեայ հիւրերը, ջուրերն ու այն ամեն առարկաները որոնք համեստ քակս դատարկացնել կ'սպառնան, խելքս գլուխէս կը թռչի և ակամայ կ'ըստիպուիմ աչքերս գոցել որպէս զի ուշադրութիւնս ուրիշ առարկայի վրայ դարձնեմ և վայրկեան մը մոռնամ այն դժբաղդ ապագայն զոր ինձ համար կը պատրաստեմ։

Այլ առակ լուարք· ընտանեկան անդորրութիւն մ'ունէինք, այն ալ վրայ պիտի տանք կարծեմ· կինս քանի մը օրէ ի վեր բոլորովին փոխուած կը տեսնեմ. ի՞նչ քանի վերագրեմ այս հոգեկան վիճակը. խոհուն կերպարանք մ'առած՝ ժամերով կը խորհի, գրեթէ բնաւ չը շաղակրատեր, կորսընցուց առջի չարաճներու զուարթութիւնը և իր ամեն ընթացքները կարդալացնեն կասկածները . . . և օր մ'ալ կը տեսնեմ որ կ'արտասուէր — ի՞նչ ունիս կնի՛կ։ — Երթանք հոգիս, տուներնիս երթանք — Բայց դեռ ժամանակ ունինք։— Ախ երթանք, տուներնիս երթանք։» Է՛ հա ասանկ մոխ'ր կլլողներէն չեմ· սակայն Աստուծոյ համար խօսելով՝ մեր կենակցութեան առաջին օրէն մինչեւ ցայսօր կինս բնաւ առիթ մը տուած չէ ինձ իւր բարոյականութեանը վրայ կասկածելու և ես հաստատապէս գիտեմ որ խեղճը իւր անփորձութեամբը քիչ մնացած է որ անգիտակցաբար զոհուի այն անխիղճ երիտասարդներէ մէկուն, որք քաղաքը բան գործ չունենալով՝ երբեք վար չեն իջնար և ցորեկ ատեն այր մարդոց բացակայութենէն օգուտ քաղելով գիւղին մէջ կը սլքտան, պանդոխներու սրտերուն, պատուհաններու առջեւ ծուզեղերի զբօսարաններն ու ջուրերու զբոսելը, մինչեւ որ ծուզակը ձգեն մէկն ու միւսը և քանդեն ընտանեաց մը հիմը։

Իմնա՞նք, այո՛, վար իմնանք, բայց ո՞ւր պիտի երթանք· միթէ ես առաջուան մարդն եմ, միթէ կրնա՞մ ժամ մը շտկէ չիտակ խանութս նստիլ առանց երկիւղի· պարտականներս մէկը կ'երթայ, միւսը կուգայ. «Քանի լիրայիդ օրը հասա՞ւ»— «Եղբայր, դո՞ւն այ սկսար գնա՛ եկուրի, ամօթ է· ամիս մ'անցաւ և դեռ քառասուն լիրան չը վճարեցիր» — «Պագասնա՛ ուսթա, քիրաեը վերէմէհօրան այլպէս տէմլի, էվի պօչալթ պաշդասը խթէեօր» և այսպէս շատ մը սիրտ ծակելիք խօսքեր։ Ո՞ւր է այն խօսքին տէր խանութպանը, ո՞ւր է տանը վարձքը կանխիկ տուողը, ո՞ւր է պօնոնեբը օրէն առաջ գեղչելով վճարող պատուաւոր մարդը. ամէնքն ալ զոհուեցան եռամսեայ ամառանոցի մը, որովհետեւ, ինչ ալ որ ըլլար, խանութպան մ'էի և բնաւ նեբելի չէր ինձ չապիկէս դուրս ելլել և 60—70 ոսկւոյ արտաքոյ կարգի ծախքի մը ենթարկուիլ։

Բայց խղճերնուդ համեմատ խօսեցէք. միթէ ես պատասխանատո՞ւ եմ այս չարիքներուն։

Տունը փոխեցինք, փոքրիկ տուն մը վարձեցինք· պարտատէրներէն ոմանց ազատեցինք, նոր պայմանագիր առինք, ոմանց ալ կէսը վճարեցինք, կիսուն ալ երաշխաւոր տուինք· բայց երբ որ ասոնք կ'ըսեմ ձեզի ջուրի ձայն կուգայ, Ատուած գլուխիդ չը բերէ որ չը գիտնաք, ի՞նչ արտաքուքներ, ի՞նչ նեղութիւններ, ի՞նչ տանջանքներ, արդեօք չաբաթներով քունի երես տեսա՞ծ եմ, չտկէ չիտակ հաց մը կիրա՞ծ եմ, վերջապէս ադէկ գէշ կարգադրեցինք և սկսանք կամաց կամաց զմեզ ամփոփել։

Այս ըսածներէս ի վեր հինգ տարի անցած է և հիմայ դարձեալ առջուան պէս գործերս կարգին են, բայց մտքերնուդ կ'անցնի՞ որ անգամ մ'ալ ամառանոցին անունը բերանս առնեմ· չատ անգամ կատակի համար մեր տղոց մօրը կ'ըսեմ·

—Մանոլի հանըմ, այս տարի եաղլը՝ երթանք քիչ մը, շատ կը նեղուինք կոր։

—Բա սուս եղի, ուրդ պաղեմ, անանկ լախրտը չը նեես, ճահիլներուն բերանը խօսք չը տաս կ'ըսէ։

Եւ ես կնոջս իրարանցումը տեսնելով խնդալէս կը ճաթիմ։

Հիմայ հասկցա՞ք թէ ինչու ամառանոց չեմ երթար։

* * *

1892 սեպտեմբեր 10

ԹԻՔԱԿՕ

ՔՕԼՕՄՊԵԱՆ ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՃՈՂՈՎՔ· — ՄԵՔԵՆԱԳԻՏԱՑ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ· —ԱՅԼԵՒԱՅԼՔ

(Մասնաւոր թղթակցութիւն «Արեւելքի»)

ՇԻՐԱԿՕ, 29 օգոստ.

Մարդկային ցեղի բարոյական, խմացական և մտաւորական յառաջդիմութեան և զարգացման ատիճանն և արդիւնքն ի ցոյց տալու համար 1893ին ի Շիքակօ խել մը տիեզերական համաժողովներ պիտի գումարուին, ցուցահանդէսի փառաւոր շէնքերու ընդարձակ և գեղեցիկ սրահներուն մէջ· այս սրահներէն զատ ցուցահանդէսի Տեսչութեան օգնութեամբ նոր մասյուն գեղարուեստից Տաճար մը ևս շինել սկսած են լմին եղերքը· հոյակապ շէնք մը որ պիտի ունենայ երկու մեծ սրահներ 3500ական հոգի պարունակելու կարող և 20-30ի չափ ալ պզտիկ սրահներ 300-750 հոգւոյ համար· այս սրահներ, ինչպէս նաեւ Օտիթօրիումի ընդարձակ սրահը մասնաւոր համաժողովներու պիտի յատկացուին· հարիւրի չափ մասնաւոր համաժողովներ պիտի գումարուին որոնց նախագահն է Զարլզս Ս. Պրնի· այս համաժողովք հետեւեալ կերպիւ պիտի ըլլան·

Մայիսի մէջ.—Նուագածութիւն և Թատերգութիւն, Մամուլ և Բժշկութիւն։

Յունիս.— Ժուժկալութիւն, բարոյական և ընկերական խնդիրք, վաճառականութիւն, ելեւմուտք և դրամական խնդիրք։

Յուլիս·—Գրականութիւն, գիտութիւն, փիլիսոփայութիւն, կրթական գործեր և դաստիարակութիւն։

Օգոստոս·— Մեքենագիտութիւն, արուեստք, կառավարական գործեր։

Սեպտեմբեր·—Կրօնական համաժողով, և տիրունական հանգստեան ժողով։

Հոկտեմբեր·— Մշակութիւն, երկրագործութիւն, մեղայուն կալուածք և վաճառականք։

Ասոնց իւրաքանչիւրն իրենց յանձնաժողովներն ունենալով ծրագիրներն պատրաստած և ատենախօսներն ընտրելու համար ընկերութեանց և անձնաւորութեանց հետ խորհրդակցելու և պատրաստութիւնք տեսնելու վրայ են։

Կրօնական, մեքենագիտական և բժշկական համաժողովք չատ նշանաւոր պիտի ըլլան, ինչպէս նաև երաժշտական ժողովք խելքէ մտքէ դուրս բան բան մը ըլլալ կը խոստանայ, եթէ այժմէն պատրաստուած ծրագրոյն պարունակութիւնք ի գործ դրուին։ Բժշկական և երաժշտական գումարմանց վրայ մասնաւոր պիտի խօսիմք։ Դալով մեքենագէտներու համաժողովին, այս ժողով գիտական մեծ կարեւորութիւն պիտի ունենայ· նշանաւորներ պիտի բազմին այս ժողովին մէջ, ովկիանոսները, լեռները ծովերը, վերջապէս ցամաք ու ծովը բնութիւնն համայն իրենց խելքին և տրամադրութեան տակ դնող անձնաւորութիւնք պիտի բազմին այս ժողովին մէջ· չեմ գիտեր թէ երկրաչափներն ալ պիտի մասնակցի՞ն այս ժողովին· Սիւէզի ջրանցքին գիւցազուն ալ Պ· տը Լէսէպս, իրեն յատուկ տեղ մը պիտի ունենայ այս պատկառելի գումարման մէջ· այս համաժողովի ծախքին համար 15,000 թաղէր յատկացուած է որուն տասը հազարը պատրաստ է։ Աչխարհի բոլոր նշանաւոր մեքենագէտներու հրաւէր եղած է և կազմուած յանձնաժողովոյ անդամ ընտրուած են ի Լոնտոն հրատարակուած «Էնճինիրրինկ» նշանաւոր թերթի տնօրէնութենէն Ուիլիըմ Մէյ և Ճէյմս Տրեհ, և Մէգսիկի Մեքենագիտաց և Ճարտարապետաց ընկերակցութեան նախագահը Տօն Ֆէրնանտէզ Լիլ, և Դանատէն ալ Սբր Կօվզի և ուրիշներ։

Ընդհանուր յանձնաժողովոյ տնօրէնք՝ Ձէրմըն Քօրթէլ, որ Եւրոպա գացած էր այս նպատակաւ, երեսուն և վեց մեքենագէտներու ընկերութիւններ հրաւիրած է իրենց մասնաւոր պատուիրակներով Տիեզերական համաժողովոյ ի մասնակցութիւն· ասոնցմէ քսանւեօթն ընկերութիւնք ընդունելով և ոչ մէկ տհաճութիւն յայտնած են· ու ոչ միայն այս ընկերութեանց անդամ եղող մեքենագէտներէն քաջալերական և խնդակցական արտայայտութիւնք ընդունուած են, այլ Եւրոպոյ Տէրութեանց մասնաւոր մեքենագէտներէն ի միջի այլոց Ֆրանսական, գերմանական, հոլանտական և Պելճիքայի կառավարութեանց կողմանէ պաշտօնապէս մասնակցելու յօժարութիւն յայտնուած է։ Մեծն Բրիտանիոյ մեքենագէտք, և այդ երկրի մեծ մեքենագործական ընկերութեանց պաշտօնեայք բոլորն ալ չահագրգռուած են այս խնդրով։ Հրաւէրին պատասխանող և հաւանութիւն ցոյց տուող մեծ ընկերութիւններէն մին է Գերմանիոյ Մեքենագէտ-Ճարտարապետաց Ընկերութիւնը և միւսն ալ Բաղաքային Ճարտարապետաց և Ճարտարապետաց ընկերութիւնը։ Այս երկու ընկերութիւնք, իւրաքանչիւրը 6000ի մօտ անդամներ ունին։

Ցուցահանդէսի վարչութիւնը աչխարհանդէսի նուագախումբին համար 12,500 տօլար յատկացուցած է, նաեւ 12,500 տօլար ալ պահեստի դրած են· երաժշտութեան մեծ վարպետներուն և երաժշտապետաց համախմբման ծախուց համար, որոնց մասնաւոր հրաւէրներ եղած են Շիքակօ գտնուելու։

Օրական տասն և հինգ հազար հոգի կ'այցելէ ցուցահանդէսը, և յունիսի մէջ 100,000 հոգի քսան և հինգ սենթ (գրեթէ 5 դրուշ·) մուտք վճարելով կիսկատար շէնքերը այցելած են· այժմ աչխատութիւնը կրկնապատկուած են շէնքերը ամբողջովին լմնցնելու համար· կը կարծուի թէ մինչեւ հոկտեմբեր գործաւորաց թիւը 8500 ելած և 10,000 ըլլալ կը կարծուի· անցեալները հինգ միլիոն թաղէռ ևս քուէարկուելով ցուցանդէսի համար, երեսփոխանական ժողովոյն մէջ գրեթէ միահամուռ ընդունուեցաւ և այս պզտիկ գումարը անմիջապէս ցուցահանդէսի Տնօրէնութեան յանձնուեցաւ։

Հ· Ա·

ԳԻՏԱԿԱՆ ՄԱՆՐԱԼՈՒՐԵՐ

ԴԱՐՁԵԱԼ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ինչե՞ր չպիտի հնարուին էլեկտրականութեան միջոցաւ։ Աւասիկ՝ միջատներու փճացմանը համար բոլորովին նոր սարուած մը կ'արտօնուի ի Գերմանիա։

Ամերիկա ընդհանրապէս ելեքտրական գիւտերովը կը փայլի լուսաւորեալ մթնոլորտին մէջ, սակայն մեր զիւրազգածութիւնը չը ներեր որ մինչ հոն երթամք, ուր յանհունս փոքրիկ բանի մը առջին կը կասի մարդ։

Երեւակայեցէք, լուսնակուոյ նուրբ թելերով հիւսուած ցանցով մը պատատեալ լայնաբիճ կանթեղ մը։ Ելեկտրական հոսանքը այդ թելերուն մէջէն կ'անցնի եւ զանոնք առանց շողարձակ ընելու, բարձրատիճան ջերմութեան մը կը հասցնէ։ Միջատները դէպի լոյսը կը խրտնին և թելերը չը նշմարելով անվրէպ կայրին ու կը մրկին։

Այս կանթեղին փորձերով՝ քիչ ժամանակի մէջ յաջողած են փճացնել մեծ քանակութեամբ գիշերային թիթեռներ, ջորեակներ և այլն։

Արդարեւ ահա օգտակար գործիք մը անոնց որք չեն սիրեր լուն կամ մժղուկը, որոց թիւը խիստ մեծ է։

* *

ՆՈՐ ՀԻԻԱՆԴԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ ՄԸ·—Նիւ-Եորքի «Էլէքթրիքալ Ռըվիւօն»ը ելեքտրական լուսոյ բաղանեայ մտացածին գործիք մը գտաւ,— ասիկայ ելեկտրական բաղանիքին հետ չփոթելու չէ,—սարուածն արկղ մը կը բաղկանայ, որոյ մէջ պիտի փակուի ենթակային մարմինը՝ գլուխն եւեթ դուրը թողլով։ Եւ շրջակայքը գետեղուած են՝ իւրաքանչիւրը 110 բարդ և 16 մտերու չոգ արձակող 70 կանթեղներ։ Արկղը ողորկ ու փայլուն մինքէլով մը պատած է, ամբողջ լոյսին ցոլացումը ապահովելու համար։ Կանթեղները 5 խումբերու բաժնուած են, որք՝ առանձին կամ միասին կրնան գործել։ փոխանակողի մը պարզ շարժումով։

Կը թուի թէ այս տեսակ բաղանիքի մը մէջ, մարմնոյ ջերմութեան ատիճանը մինչ 51.5 կը բարձրանայ 10 երկվայրկեանի մէջ. մարթն ալ կը թիանայ իբր թէ արեգին ջերմ շառաւիղներուն տակ դրուած ըլլար։ Կը յաւելու թէ մարդ ըստ պարագային կրնայ նաեւ ամբքել այս գործիքներուն ուժգնութիւնը։ Եւ թէ, ելեկտրական լուսոյ և չոգւոյ խառն բաղանիք մը՝ յոգնութիւն չպաղէր բնաւ հիւանդին, անտի երնելէ վերջ, մինչեւ մարդ չոգւոյ պարզ բաղնիքէ մը ելնելէ վերջ՝ յոգնած պարտաւած, հազիւ ինքզինքին յանկողին կը դնեն։ Ա· Թ·

ԱԶԳԱՅԻՆ ՀԻԻԱՆԴԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս շնորհակալութեամբ կը հրատարակէ օգոստոս ամսոյ նուիրատուաց անունքը՝

Բարեգէմ Տեարը եւ Ազնուասիրտ Տիկնայը՝

Զաթալ խանի կոշկամը արհեստաւորք որք, իւրեանց գովելի սովորութեան համաձայն այս տարի եւս Ընծ· դրամ 1560, Յարութիւն Քօստիկեան եւ Յարութիւն Պէրպէրեան 750, Կարապետչարայի դրան Տիվրիկցի Մ·Թեհաճեանը 565, Յարութիւն Ասլանեան 216, Սերաստիոյ Պինկէօլ գիւղի ազգայինք 160, Զուրբաբ Զէշմէ խանի մէջ հասատատեալ ցանցանակի հասոյթ 128½, Սերաստիոյ Կովտրն գիւղի ազգայինք 120, Սերաստիոյ Բաշա գիւղի ազգայինք 120, Տիգրան փափազեան ժեռամբ Արեւեանի 108, Գասպար Պաղտասար Դարբիկեան 108, Տիկին Մանծառայ Կէնեան Ատարազարցի 108, Խաչատուրա գիւղի ազգայինք 100, Մեծ մարսի բեռնակիրք 100, Ցիշեանեներէն հացագործի համար 100, Խաչիկ Հիւնքեարպէյէնտեան 96, Նուկայի պահապանք 80, Նշան Մերկերեան 60, Սեբաստաց Տ· Պապեան 60, Տիկին Ազապի Դարբիէեան 54, Յովհաննէս Դարբիէեան 54, Սարգիս Եսկիշեան 50, Սեբաստիոյ Խանդարուը գիւղի ազգայինք 40, Պէշիկեաշի նաւատաղցի ջրհանիկիրք 40, Բարեսէր Ոմն Կարնեցի 40, Խանդարուը գիւղի ազգայինք 30, Բաղրին գիւղի ազգայինք 30, Արմենակ Մանուէլեանի հոգւոյն Ս. պատարագի համար 30, Սեբաստացի Տիկին Մ. Հարզարաբ 20, Բարեսէր Ոմն 20, Կարապետ Թէբվիզեան 20, Բարեսէր Ոմն 20, Կարապետ Առաքել 20, Բարեսէր Ոմն 20, Մարսի Ծահնազաշիք 20, Մ. Յակոբ Դարամանեան 20, Խորէն Երամեան 20, Տիզրանակերցի Ոմն 20։

Գումար 5107½.

Վասեմ· Յովհաննէս պէյ Տատեան 25 խանթար յարդ, 40 բիլէ վարսակ, Դեր· Սիմէոն Աբր-Եպիսկոպոս Սէֆէրեան՝ 2200 հատ մեներուկ եւ սեխ, Նուկայի պահապանք, որպէս ամեն տարի, նոյնպէս եւ այս տարի՝ 4 հատ ոչխար, 5 հոխայ իւղ 20 հոխայ բրինձ, 1 հոխայ պանիր, 60 բիլօ հաց, Մեծ մարսի ծողաբարձ բեռնակիրը՝ 5 հատ ոչխար 200 բիլօ հաց եւ 78 հոխայ բրինձ, Մոհ. Փիլիպպոս Զիրբիրեան՝ 1 ոչխար 20 հոխայ բրինձ, Կեսարացի Յարութիւն Տամամպեան՝ 1 ոչխար, Աւագ Տ. Պէտրիկեան սենեկապետ Պոնտիրի բեռնակիր 1 ոչխար, Դալանիոյ մարսի բեռնակիրը 2 ոչխար, Սերաստիոյ Խանդարսզ գիւղի բեռնակիրը 1 ոչխար, Սենբաստիոյ Խանդարուը գիւղի բեռնակիրը 1 ոչխար, Սերաստիոյ Բաղրին գիւղի ազգայինք 1 ոչխար, Տ· Կ· Լիմրզեան՝ 1 ոչխար, Մատեոս Մազակեան՝ 78 հոխայ բրինձ, Վարդան Յարութիւնեան՝ 62 հոխայ խաղող, Մանասէ Յովհաննէս ի Կէտիկ բաշա 47 հոխայ խաղող, Զաթալ խանի սենեկապետ Թալասցի Մատթէոս Թարխմանեան 9 հատ բաղ, Բարեսէր հացագործ Ոմն՝ 31 զոյգ պէշլիկ հաց, Փոտոսիոյի հետեւեալ բարեսէր անձինք՝ Բաղդիմալ Սեդրակ, Թէլզի պաշի Յակոբ, Պետրոս Դէլորգեան, Պետրոս Սրլիվրլի, Յարութիւն Կարտպտեան, Յովհաննէս Թորոսեան, Յովհաննէս Գաթմազ, Արշակ Մատթէոս, Պետրոս Յովհաննէսեան, Քիւեազի Զաքիրեան, Տարէս Բակուտեան, Կուռնի հանի Յակոբ, Խաչատուր Դրիզորեան, Յովհաննէս Զիլէրեան, Թաղիոս Գալուստեան, Պետրոս Ազարեան, Ասատուր Ճանճուկեան, Սարգիս ձէպիեան՝ 2700 հատ մեներուկ, Արմենակ եւ Թուրէն Մանուկեան 2 բարձ 7 հոխայ բանկալ, Սամուէլ Ղ· Գարտիզպանեան 600 տեսր սիկարի Թուղթ, Զաթալ խանի կոշկակար արհեստաւորք՝ 10 հոխայ շարաբզոն Տիկին Պիրեզի Վարդանեան՝ 5 նոյ բուկլէկ ոսկի մը։

Ի Դիմաց Հոգաբարձութեան

241 Ազգ· Հիւանդանոցի

Ատենադպիր Ատենապետ

Ա· ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ ՄԻՔ· ՅԱԿՈԲԵԱՆ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

—Մայրիկ, էտուարին թող մի տար որ ապակիին վրայ եղող ճանճը սպաննէ։

—Ինչո՞ւ համար։

—Որովհետեւ ես կ'ուզեմ սատկեցնել։

* *

—Ի՞նչպէս ինքզինքդ խնամել կուտաք այդ բժիշկին, կ'ըսէին Փոռժին, ոչ որ ազատած է։

—Կը ներեք, անցեալ օր մէկը աղատելը տեսայ։

—Անկարելի է։

—Այո, կին մը որ կը խեղդուէր աւազանին մէջ։ Զոր մը երկնցուց նմա։

* *

Մայրիկը, յանդէտս սեղանատունը հասնելով, կ'սպառնայ փոքրիկ Յակոբիկին ականջները քաշել։

—Կրկի՞ն խեսկիր բօրդոն գաւաթ մը։

—Ես չխմեցի, մայրիկ։

—Ո՞վ էր ուրեմն։

—Պիսքիւի մը որ ամենքն ալ խմեց։

—Ա՛հ... և ո՞ւր է այդ պիսքիւին։

—Պիսքիւի՞ն... (լուրջ ձայնիւ) զայն պատժելու համար, կերայ։ Լ· Պ· Թ·

ԿԱՐԵՒՈՐ Ա.ԶԴ.

Բուսէլիի երկաթուղեայ վիճակահանութեան 136դը պիտի քաշուի յառաջիկայ հոկտ· 1— սեպտ· 19 ին։

Սոյն վիճակահանութեան մասնակցիլ փափաքողք պէտք է դիմեն ստորագրեալ հասցէին։

Պիտի շահին 600 թիւեր, որոց առաջին պարգեւն է այս անգամ 300,000 և երկրորդը 25,000 ֆրանք։ Անոնցմէ զատ 48 թիւեր ևս կը շահին գարձեալ մեծ պարգեւներ· իսկ մնացեալ 550 թիւերն ալ 400ական ֆրանք։

Մէյն մէկ թիւով կրնայ շահուիլ ասունցմէ մին և մինչեւ իսկ առաջին պարգեւը։

Շահելի գումարին ամբողջը ստանալու իրաւունք ունեցող «բրոմէսիին գինն է 10, կէսինը 7ու կէս և մէկ քառորդինը 4 դահեկան։

Գաւառներէն հնչուն դրամի տեղ «բոսաալի բաւ

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. ոսկի 1,000,000 — **"ՓԻՆԻՔՍ"** — Հիմնեալ է 1782 թուականն յամին

ՓԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետեարք Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրերն են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՓԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի փոխարէն հատուցումներ։

34

ՓԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կահաւորածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանաց և միջնորդութեամբ ստորագրողաց, որք ունիմք լիազօր իշխանութիւն կնքագրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍԱՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 11։ և 12, Պանտալէր խան, Ղալաթիա, Աւստրիական թղթատան վերև։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԳ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

Ա. ԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ ֆռանք 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890 » 6,165,860
Տարեկան հասոյթ » » » » 14,135,925

Ընկերութիւնս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր տակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահէջ—Գաբու, Անանիատիս խան 12, 13, 14

ՖՈՒԱՆՔՖՈՐԹՈՒԱՋ

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանք 6,250,000 — Պահեստի դրամ ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և գրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանաց և սակագնաց։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպական 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամ գումարն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Նիզամիյէ էրզագ անպարը իշուն միապայեա օլունաճագ օլան 15,000 գըլէ սօղանը պէհէր գըլէսի 15 փարատա թալիպի էօհտէսինտէ օլուպ իլլուը Բումինին 17ինճի բէնշէնպէկ կիւնի գարարը գաթիսի վիրիւէհկիւնտէն թալիպ օլանլարըն մագամը Սէրասկէրի լէվազիմ տայիրէսինէ կէլմէլէրի։

Նօ. 41 — 2—3

Պիթլիսատ պուլունան ասաքիրի Շահանէնին 1 սէնէլիք խարկսի իշուն մահալինճէ մէվգբի միւնագասատա պուլունան էրզագ մի սայիրէտէն նանը ապիկին պէհէր գըէսի 24, գօեուն էթինին 85, սըզըը էթինին 75, էրգին 91, սատէնին 317, Թուզուն 30, գուրու սօղանը 29, մօմը 220, սապօնը 329, կազը 131, շայիրին 30, սամանը 9, հաթապը 7, չէքէրին 270, իւզիմին 63, Փասուլեանը 65 բարա Փիւեաթլար իլէ մահալի թալիպի էօհտէսինտէ օլտուզունտան, պուրաձա թէնզիլը Փիւեաթ իլէ իթասընա թալիպ օլանլարը Թարիխը իլանտէն իթիպարէն 1 հաֆթաեա գատար մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի։ Նօ. 37 — 3—3

Պաշ Գալէտէ պուլունան նիզամիյէ 30ընը ալաեը Յինճիւ թալուրը իտարէսի իշուն մահալինճէ միւնագասատա օլան էրզագտան նան 32, կիւշթը զանէմ 96, պագր 56½, էրգ 124, սատէ 145, Թուզ 36, մամ 228, սապօն 388, կազ եաղը 196, չէքէր 374, իւզիմ 120, շայիր 65, սաման 7, սօղան 46, Փասուլեա 113, Նոհուտ 88 բարատա թալիպլէրի էօհտէսինտէ օլտուզունտան, պու Փիյաթ լարտան թէնզիլաթ ինճրասը իլէ էրզագը մէզքիւրէնին իթասընա Տէրսաատէթտէ թալիպ օլանլարը Թարիխը իլանտէն 1 հաֆթաեա գատար մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի։ Նօ. 38 — 3—3

Գոսօվա Ֆըրգասընտա պուլունան հայվանաթ իշխուն ալընճագ մուսթապիէնին իլլուլը 16ընը կիւնիւնէ գատար մահալինճէ միւնագասասը իճրա օլունուպ մէզքիւր կիւնտէ գարարը վէ 21ինճի կիւնիւ տախի իհալէի գաթիէէսի իճրա օլունաճաղընտան իթհաեա թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի։ Նօ. 39 — 3—3

Ճիւնուտը ճէնամը միւլիքանէէ վիրիլմէք իւզրէ միապայեա օլունաճագ օլան 227,000 գըլէէտէն 250,000 գըլէէ գատար գուրու Փասուլեանընը պէհէր գըլէէսի 39 փարա 93 սանթիմինտէ վէ 115,000 գըլէէտէն 130,000 գըլէէէ գատար նոհուտըն պէհէր գըլէէսի 50 փարատա վէ 280,000 գըլէէտէն 300,000 գըլէէէ գատար բաթաթէսին պէհէր գըլէէսի 32 փարա 80 սանթիմինտէ թալիպի էօհտէսինտէ օտ օլուպ իլլուը Բումինին 22ինճի սալը կիւնիւ պիւիւնճագասա գարարը գաթիսի վիրիւէհկի վէ իրթէսի կիւնիւ 100տէ 5 թէնզիլ գատու օլունճաղը ճիկէթլէ, իթասընա թալիպ օլարըն մագամը Սէրասքէրի լէվազիմաթ տայիրէսինէ կէլմէլէրի։ Նօ. 40 — 3—3

ՄՈՍ

ՇՈՓԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լէյբէրալ և Մէնչէսթէրական գիծ բեռ. շոգենաւ

Անուանք	Թոնաժ	Անուանք	Թոնաժ
Քանսաս	4200	Ալֆինքս	3000
Ֆէրտ	4000	Սայրիս	3000
Օսմանլի	4000	Նէբէթիս	3000
Սէսսէքս	3250	Բէրա	3000
Թիպս	3250	Լօդիւս	800
Մանչասթր	3250	Օլիմպոս	800
Մարիթիմ	3250	Սէրիլ	700

Դիմել առ Ֆ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ. Ուիթիլ խան

ՋԷՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.

34 Ձէյմս Պարիդ Լիմիթէտ

ՁԵՐՄԱԿ ԱԿՌԱՑՆԵՐ

Աւորոչապանութիւն Բերնի

ՊՈԹՈՅԻ ՋՈՒՐԸ ‖ EAU DE BOTOT

Կը պահպանէ ակռայները, կը պնդէ ընդերքը, կը զովացնէ բերանը։

ՓՆՏՌԵԼ ԲԱՌ ՊՈԹՈՅԻ ՋՈՒՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ՝ 17, Ռիւ սը լա Բէյ, ԲԱՐԻԶ։

Ասկից առաջ՝ 229, Սէնդ-Օնօրէ

ԿԸ ԾԱԽՈՒԻ ՈՂԼՈՐ ՀՈՏԱՎԱՃԱՌԱՑ ՔՈՎ

Հարցնել նաև Պոթոյի Վինեկրը ՏԸ ԹՈՒԱԼԷԹ, Նրբութեամբ և բոյրով դերազանց։

2203 Կը գտնուի ի Կ. Պոլիս, Պօն Մարշէն, 354, Մեծ փողոց Բերայի

OREZZA

Հռենցային ջուր երկաթախառն բրբուծով, ամենէն ճարուստը երկաթի եւ ասիս հառագոնիի մասին։

ԱՏՍ ՋՈՒՐ ՄԲՑԱԿԻՑ ՁՈՒՆԻՆ

ՍՏԱՄՈՔՍԱՑԱՒԵՐՈՒ—ՏԷՆԴԵՐՈՒ—ՔԼՈՐՈՁԻ—ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐԵԱՆ ՆՈՒԱԶՈՒԹԵՆԷ

ՑԱՌԱՋ ԵԿԱԾ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԲՈՒԽՄԱՆ ՀԱՄԱՐ

Լ'ԷՔՈՆՕՄԻ ԷՆԹԷՌՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22

Հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Ամէն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դժնեալով մեր խնայած և ուելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հազար ու մէկ պատճառներ գտնելով՝ մեր խնայածստակներն յումպէտս կրվատենք։

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմելն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք։

Ահաւասիկ «Լ'Էքոնօմի Էնթէռնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր գումարներ, այսինքն ամիսը հինգ, տասը ևն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք հաստատ դրամագլուխ մը։

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԻՆԷ 265

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժնորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Միրքէէի, հանրային պարտուց պաշտօնատան դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27· ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆի կամ ընդհանուր քննիչ ԱՆԻԲՏՈՍ ԱՀԱՐՕՆԵԱՆի։

ԳԻՐ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԻՆԻԹ

Տարբեր Այբի ջերմային հիւանդութեան, այսինքն՝ որ տիֆան բաղադրութեան մի է զուգակցեալ, է գառնիամ և ազգու կազդուրիչ ամէն տեսակ ֆիզիկական խանգարմանց, որ յատուկ լուգան մանչանուտ վայրերու ջերմոտ կլիմային ըստ ու ապականեալ օդերին, որուն օդատարութիւնն է ապաքինիչ տոյգ յատկութիւնն երբոյ խառնուած է նորա անհամար ազդեցութեանց տոյգ գիտութիւնն։ Այս ֆիզիկական խանգարումներն յատակ կուգան օդին մէջ լուսցոյց թունաւոր անշնչելի նիւթոց միջոցաւ, որք թոքերն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդն, և յատակ կը բերեն տեսակ տեսակ կիրքեր և ախտ գիր, և արեան թունաւորութիւն, որոյ ահաւոր հետևանքն նորատ է. ջերմն և տարատա, թարգուն ջերմ պարբերական ջերմն, ընդհանուր ջերմն մանգաւոյն տենդ և հրատաղ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտն ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ մանչանուտ-ուրեալ վայրերէ մանաւանդ նիւթեր ով, կամ բաց աղբանոցներէ և ականներու ծակտիներէն ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն ընտանութեամբ։

Այբերի ջերմի ու տենդից գէղ կը ընկէ այդ թունաւորնիւթոց կամ կ'զերա ազդեցութիւնն գուցո կը գանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գոր է ածութիւնն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտն տոյգ, միայն թէ տրուած հրամանքի համեմատ գործածուի։ Կը ծախուի Մինասեան և Սիրոյ Ամերիկեան վաճառատան մէջ ի Պալաթիա։

Կ. Պոլսոյ։ 29



ԱՌԱՋՐՆ ԿԱՐԳԻՆ ՇՈՓԵՆԱՒԻ

Դրբեն-Սեկ-Անէլէյ, Կ. Պոլսոյ և Օրէասյէ մէջ

ԹՈՄԱՍ ՍՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՆԻ

Անուանք	Թոնաժ	Անուանք	Թոնաժ	Անուանք	Թոնաժ
Ալպաս	3000	Ցիսմինկօ	1600	Բալէրմօ	3200
Ամէրօ	3000	Կուլիէօ	5500	Ռանտէր	1700
Ասսլլը	5500	Կիրանտօ	2200	Բիլանէ	1500
Արկօ	2800	Կոզզ	1 00	Բօլը	1000
Սբիտսպրգ	5000	Կրօսնօ	2200	Քուէրգ	2800
Պասանս	3000	Հիբօ	2000	Ֆիլիպ	4400
Գրրսսրիս	2200	Հիսմարկ	3600	Ֆինլանդ	3200
Գրանդ	2000	Հիսնաս	7000	Ֆրլլը	3000
Գրիֆֆալ	3800	Հուանգեր	1200	Ֆոսֆ	3500
Գէրտը	2600	Կլայնօ	5000	Ֆրոզարիս	3500
Դալիսսս	2500	Հիանս	2300	Ֆայէրնս	4000
Դամէ	2100	Քէլլս	2000	Ֆանդիսկ	8200
Դանդ	2000	Քոլբրնս	4200	Ֆարֆ	2000
Դօմն	2700	Քոլնս	2200	Ֆիլիս	2000
Զէբակ	5000	Լէս	2000	Ֆոբնեսս	4300
Գլիս	3000	Լէքանթ	4500	Ֆ. Ռուլոզ	3000
Գրոբրսս	3400	Լիվրնս	3000	Ֆոտրս	1200
Տիդ	2500	Դարմ	1500	Ֆոլիսս	2800
Տօմնս	2500	Մարկնկ	4300	Ֆորբիսս	900
Տուբ	4800	Մարգէլլ	6500	Ուրպինս	5000
Տրաբ	2100	Միլ	2000	Վալթուրս	5000
Իսպանան	2600	Պարբինս	3100	Եէսս	3600
Իլսորտսս	3000	Նէրս	2000	Զէպրա	1000
Լէէքթր	3200	Օրլանս	3000	Տիֆֆրնս	200
Տրսթ	2600	Օմէլլս	5000	Հէսկս	200
Ֆայլսն	800	Դրանս	4200	Զէրս	140
Ֆիսս	700	Ուգ	2000	Պոսքիթ	120

Եմիջէն Մանարը 8000
Բիթիքն Մանարը 8000
Լրգիսն Մանարը 8100

Պատուիրելու համար ամէն դիմումներն կ'ընծայուի Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒՈՅ Գործակալ Թիւ 17-18, Քիւչիւք Մէհմէթ խան, Ղալաթիա

40

ՔՈՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈՓԵՆԱՒՈՒՑ

Ամէն շաբաթ երկու անգամ կը բանի Լիվերփուլ և Ամերիկայ միջև

Անուանք	Թոնաժ	Անուանք	Թոնաժ
Լամբրիա	7718	Գալիէնիա	4845
Էթրուրիա	7718	Պոթնիա	4531
Սրբիկա	7391	Սամարիա	3574
Լուսանիա	7268	Մարսիան	2408
Բասնիա	5587	Ալպս	3693
Ալգիպտիա	5517	Սարակոսա	2166
Կալիա	4809	Թարթիա	2243
Սիթիա	4557	Բալտիրա	2144
Ալէքսօ	2.45	Թրինիտատ	893
Բէտար	1976	Մարատոն	1855
Շեբրոնիդ	1614		

Դիմել առ Թոմաս Ջ. Ճոլի Գործակալ Thomas C. Joly Ալիքսանդրիա խան. Թիւ 11 Ղալաթիա

17

ՇՈՓԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԹԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայ և Պոնտոսի մէջ կանոնաւորագոյն ճանապարհ

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,

Ա. կարգ 245 ֆրանք
Բ. » 175 »

Մանրամասնութիւն

Նաւագնէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմիլ առ գործակատար ԹԻՄՈԹԷ ԲԸՂՈՒԼ Մուհլանէ Սիթէ Ֆրանսէ

5

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԳԷՈՐԳԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՅ

ՌՈԵԱԼ ԷՔՍՊԼԷՆՃ

ԱՍԻԻԱՆՍ ՔՈՐԲՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի 4,000,000
Ցարդ հրդեհի արիւնից համար տուած է » 35,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամէն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարումնք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ եւ իցէ ՁԵՂՔի կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.

140 Պահէկ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթիալ խան.

EMULSION SCOTT

(ՍԿՈՏԻ ՕՀԼԵՐԵԿ)

ԹՈՐԻՒ ՁԿԵՆ ՉԱՐԻՍ ԻՒՂ.

Լիովին ազատ ոչ շոշ և սոսոյով

Գարատանալ Մեռամ ՍԿՈՏԻ և ՉՕՌԻՆԻ ի Նիւ-Եորք։

Կարմրին չափ անսրբամամ է

Մարդու ձկան հետ իւղի բոլոր յատկութիւններն գտնուին իրենց ինքնաբերեալ յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճաղատութիւնը

Բժիշկներն ընդունուած է, անարգ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄԱՄԷՐ ԵՒ ՀԻՐԵԱԼ

ԱՐԵՒԵԼ ԵԱՆ — ԵՐԿԱԹՈՒՂԻ

ԵՐԹԵԽԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻԻՋԻՒՔ—ՉԷՔՄԷՋԷ

Սկսեալ ի 1 Հոկտեմբեր (Ն. Տ.) 1892, մինչեւ յետոյ տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻԻՋԻՒՔ—ՉԷՔՄԷՋԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

	8	62	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46	48
	Առաւօտ												Իրիկուն									
	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.
Կ. Պոլիս	...	6 00	6 30	7 00	7 30	8 30	9 ...	9 30	10 ...	10 30	1 ...	11 30	12 ...	1 30	2 ...	2 30	3 ...	4 ...	4 30	5 ...	5 30	6 ...
Գալատա—գաբու	...	6 09	6 41	7 09	7 39	8 40	9 9	9 40	10 9	10 39	11 9	11 42	12 9	1 39	2 9	2 39	3 9	4 09	4 41	5 10	5 39	6 09
Եէնի—գաբու	...	6 13	...	7 13	...	8 44	9 13	9 44	10 13	10 43	11 13	11 46	12 13	1 43	2 13	2 43	3 13	4 43	4 45	5 14	5 43	6 13
Տաւուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	...	6 19	...	7 19	...	8 50	9 18	9 50	10 18	10 49	11 19	11 52	12 19	1 49	2 18	2 49	3 19	4 19	4 51	5 20	5 49	6 19
Եէսի—գուլէ	...	6 23	6 53	7 23	7 48	8 54	9 20	9 54	10 20	10 54	11 23	11 20	12 22	1 53	2 20	2 53	3 23	4 24	4 56	5 25	5 55	6 23
Մաքրիգիւղ	...	6 36	7 12	7 36	8 03	9 08	...	10 8	...	11 8	11 34	12 19	...	2 04	...	3 03	3 38	4 36	5 06	5 37	6 07	6 33
Ալ Սիէֆանոս	...	...	7 26	...	8 12	9 17	...	10 17	...	11 17	11 44	...	...	2 13	...	...	3 47	4 45	...	5 46	6 17	...
Քիւչիւք Չէք	...	...	7 36	...	...	...	...	...	...	...	11 53	...	...	...	...	...	...	...	...	...	6 26	...

ՔԻԻՋԻՒՔ—ՉԷՔՄԷՋԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	45	47	49	61
	Առաւօտ											Իրիկուն										
	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.
Քիւչիւք Չէք	...	...	...	7 15	...	...	...	...	...	...	...	12 45	...	...	...	...	...	...	...	...	7 07	...
Ալ Սիէֆանոս	...	6 30	...	7 24	...	8 30	...	9 30	...	10 30	11 25	...	12 57	...	...	2 30	...	4 ...	4 18	...	5 58	...
Մաքրիգիւղ	...	6 40	18	7 36	8 12	8 41	...	9 41	...	10 40	11 40	12 40	1 0	...	...	2 40	3 11	4 11	5 09	5 38	6 08	6 38
Եէսի—գուլէ	...	6 52	7 24	7 47	8 24	8 53	9 25	9 53	10 25	10 52	11 55	12 52	1 23	1 52	2 25	2 52	3 22	4 22	5 3	5 32	6.22	6 52
Սամաթիա	...	6 56	7 28	7 51	8 28	8 57	9 28	9 57	10 28	10 56	11 58	12 56	1 28	1 56	2 28	2 56	3 26	4 26	5 27	5 56	6 26	6 56
Տաւուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Եէնի—գաբու	...	7 02	7 34	7 57	8 34	9 03	9 34	10 03	10 34	11 02	12 04	1 02	1 34	2 02	2 34	3 02	3 32	4 32	5 33	6 02	6 32	7 02
Գալատա—գաբու	...	7 08	7 38	8 01	8 38	9 08	9.38	10 08	10 38	11 08	12 08	1 08	1 38	2 08	2 38	3 08	3 38	4 38	5 38	6 08	6 38	7 08
Կ. Պոլիս	...	7 16	7 46	8 09	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 16	12 16	1 16	1 46	2 16	2 46	3 16	3 46	4 46	5 46	6 16	6 46	7 16

Փոքր ծրարներն անխարդ կ'ընդունուին ամեն կառաքելի մէջ, իսկ մեծ ծրարը Զէյթունի Մաքրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջև բանաց կառաքելոց մէջ միայն ընդունուին։

Ցնոր տնօրինութիւն, Թիւ 8· 10· 14, 43, 47 և Թիւ 49 կառաքումները միայն վայրկեան մը կանգ պիտի առնուն ի Զէյթունի Գրանոս։

1·